



Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

*Մեր կոնտակտները՝*

*Պաշտոնական կայք՝ <http://www.armin.am>*

*Էլ. փոստ՝ [info@armin.am](mailto:info@armin.am)*

ԳՐ. Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՎԻՄԱԳՐՈՒԹՅՈՒՆ

---

«Յայկական վիճագրություն» ուսումնական ծեռնարկը  
տպագրվել է «Զանգեզուրի պղնձա-մոլիբդենային կոմբինատ»  
ՓԲԸ գործադիր տնօրեն  
Մաքսիմ Անուշավանի Յակոբյանի  
հոկանավորությամբ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ՀԱՅԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ  
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՎԱԾՆ

ԵՐԱԾՈՒԱԿՈՐՎԱԾ Է ՈՐՈՇՍ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԶԵՂՈՎԱՐԿ  
ՀՅ ԿԳ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԻ ԿՈՂՄԻՑ

## ԳՐՔԻՆ ՀՈՎԱՄԱՎՈՐ

### ՄԱՔՍԻՄ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ

Թանկագին Մաքսիմ Անուշավանի.

Ի սրտե շնորհակալ եմ աշխատության տպագրական ծախսերը հոգալու համար: Դուք աշխարհաշեն մարդ եք, մտավորական այրերի աջակիցն ու բարեկամը: Վկա՞մ՝ այս գորի լույս ըմծայում: Տասնյակ տարիներ շարունակ ես աշխատում եմ Սյունյաց փառքի տաճարներից մեկում՝ Վահանականքում, ուր խաղաղ ննջում են Լեռնաշխարհի հայրենանվեր արքաները, շինարար թագուհիները, հոգևոր դասի առաջնորդները: Նրանց բոլորի մասին ես շարադրել եմ Սյունիքի միջնադարին նվիրված իմ երեք մենագրություններում և հոդվածներում:

Այսօր, երբ Ձեր հոգանականավորությամբ լույս է տեսնում սույն ծեռնարկը՝ ուզում եմ երախտագիտությամբ ասել, - «Ըստ գործոց Ձերոց եղիցին Ձեզ», - սիրենի բարեկամ:

Ձեր՝ Գրիգոր Գրիգորյան

22.11.2000

Երևան-Կապան-Վահանավանք

Գ. Մ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

### ՀԱՅԿԱԿԱՆ ՎԻՄԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Համառոտ ծեռնարկ բուհերի պատմության և բանախրության  
ֆակուլտետների համար

Г. М. ГРИГОРЯН

### АРМЯНСКАЯ ЭПИГРАФИКА

учебное пособие для вузов



Երևան 2000



## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Դասարակության զարգացման պատմությունը ցույց է տալիս, որ վաղնջական ժամանակներից սովորույթ է եղել հմաստավորված նշաններ ու պատկերներ քանդակել կամ դրոշմել ժայռերի ու ժայռաբեկորների, կավե տախտակների, ոսկրե, փայտե, մետայյա առարկաների, առտնին կենցաղային իրերի, ինչպես նաև պապիրուսների վրա: Դրանք հանդիսանում են հնագույն ժողովուրդների պատմության փաստագրերը կամ վավերագրերը, քանզի արտացոլում են հասարակական կյանքի ամենատարբեր ոլորտները՝ պետական-քաղաքական, ռազմական, օրենսդրական, առևտրային, մշակութային և այլն: Պետական նշանակության վավերագրերը, որպես կանոն, պահպանվում էին արքունական դիմում և պաշտամունքային կենտրոններում, իսկ օրենսդրական ակտերը, ծեռագիր մատյաններից զատ, հաճախ փորագրվում էին մեխանների, հասարակական շենքերի, հետագայում նաև եկեղեցիների որմերին կամ առանձին կորոնների վրա:

Վիճագրությունը տարածված է եղել Դին աշխարհի բազմաթիվ երկրներում՝ Եգիպտոսում<sup>1</sup>, Հնդկաստանում<sup>2</sup>, Ֆին Շունաստանում<sup>3</sup>, Չոռոմում<sup>4</sup> և այլուր:

Դին Ռուսիայում գգալի քանակ են կազմում ներտաճարային սվաղի և որմանկարների վրա անկանոն ծևով կատարած մակագրությունները, (գրաֆֆիտի), որոնց հեղինակները տարբեր ժամանակներում պաշտամունքային կենտրոններ այցելած հավատացյալներն են: Կիև Ս.Սոֆիա տաճարի պատերին մեզ հաջողվել է հայտնաբերել 24 հայերեն մակագրություններ՝ թվագրված 16–18-րդ դարերով: Այդ արձանագրությունները վկայում են, որ Դին Ռուսիայի մայրաքաղաք Կիևը թաթարական տիրապետության շրջանում վերանվանվել և կոչվել է Մանքրման՝ գովելի, գեղեցիկ քաղաք (դիշաղերեն լեզվով)<sup>5</sup>: Կիևի, Նովգորոդի և այլ պաշտամունքային օջախների մակագրությունները վերծանել և հրատարակել են Բ.Ա.Ռիբակովը<sup>6</sup>, Ս.Ա.Վիսոցկին<sup>7</sup>, Ա.Ա.Սեղինցլաւը<sup>8</sup> և ուրիշներ:

Դայաստանում նույնպես վաղնջական ժամանակներից կիրառվել են այլևայլ գաղափարանշաններ, մեհենագրեր, հիերոգլիֆներ, որոնց ընթերցմանը և մեկ-

նարանությամբ նախկինում գրաղվել և այժմ շարունակում են ուսումնասիրել մի շարք գիտնական այլեր (Ա.Գ.Արտահամյան<sup>9</sup>, Լ.Ա.Բարսեղյան<sup>10</sup>, Ռ.Դ.Բարսերե<sup>11</sup>, Դ.Ա.Մարտիրոսյան<sup>12</sup>, Ա.Ե.Մովսիսյան<sup>13</sup> և այլք): Լ.Ա.Բարսեղյանը 1960-ական թվականներին առաջինը հանգամանորեն ուսումնասիրեց և հրապարակեց 97 նշանագրեր: Նախամաշտոցյան գրերին և, մասնավորապես, Վանի թագավորության մեհենագրերին վերջերս հատուկ անդրադարձավ Ա.Մովսիսյանը, որը փորձեց նոր մեկնարանություններ տալ «շուրջ հինգ տասնյակ մեհենագրերի»<sup>14</sup>:



Մինչև այժմ հայտնի են 1350 գրակիր առարկաներ<sup>15</sup>, ընդ որում շուրջ 300 մեհենագրեր<sup>16</sup>: Ուսումնասիրողները ժառանգական կազ են տեսմում միջնադարյան մատյանների նշանագրերի և հիերոգլիֆների միջև: Առաջ է քաշվում այն վարկածը, ուստի որի «Քիայնական մեհենագրերի լեզուն հնագույն հայերենն է»<sup>17</sup>: Այս կարծիքն առանց բանձրացնելու Ա. Մովսիսյանը հայտնել է «Դնագույն պետությունը Դայաստանում՝ Արատտա» (Երևան, 1992) աշխատության մեջ, գրելով: «Ք.ա. III հազարամյակի առաջին կեսին Դայկական լեռնաշխարհում բարձրացած պետությունն ունեցել է սեփական գիր»<sup>18</sup> ընդ որում, «գրային համակարգի նշաններն (Վանի թագավորության ժամանակ) ունեին ավելի գծային, քան գիր նշաններն (Վանի թագավորության ժամանակ) ունեին ավելի գծային գիր»<sup>19</sup> և որ գծային գրերի համակարգն առաջացել է տեղական նկարային տեսք»<sup>20</sup> և որ գծային գրերի համակարգն առաջացել է տեղական պատկերագրությունից: Գրի առաջացման նախափուլը Դայկական լեռնաշխարհապատկերագրությունից: Գրի առաջացման նախափուլը Դայկական ակտերում սկզբնավորվել է քարենդարյան ժամանակաշրջանում անցնելով երկու հոլով սկզբնավորվել է քարենդարյան ժամանակաշրջանում՝ նաև սկզբնավորվել է V հազարամյակից: Ննանատիպ հացերին առատ լուս են սփոռում լեզվաբանական աշխարհագրությունը, հնեաբանությունը ու հնագիտությունը:

Սեզ են հասել երկեզու (բիլինգվա) և եռալեզու (տրիլինգվա) մի շարք արձանագրություններ (Ղարեկ Լ-ի Բիհիսթրունյան ու Ռոգեթյան քարի բնագրերը), որպիսի երևույթը ավանդաբար պահպանվել է մինչև օրս հատկապես հայ գաղթօջախներում<sup>21</sup>: Բազմաթեզու բնագրերը կարելի է վերծանել լեզուներից մեկի ոգնությամբ<sup>22</sup>: Օրինակ՝ Սեղմի կարավանատան 1332 թ. արձանագրության բովանդակությունը Ղ.Ալիշանը վերականգնեց նույն տեղում փորագրված արաբատառ պարսկերենի բաղդատությամբ<sup>23</sup>:

Արդեն նշել ենք, որ ժառանգական կազ կա հնադարյան հիերոգլիֆների և միջնադարյան ծեռագիր մատյաններում եղած նշանագրերի (գաղափարանշանների) միջև: Սկզբնաղբյուրներում դրանք կոչվում են «Նշանագիրը իմաստանոց» կամ գաղափարագրեր<sup>24</sup>: Առաջին անգամ այս նշանագրերի վրա ուշադրություն դարձրեց Ս. Չամչյանը<sup>25</sup>, այնուհետև՝ Գ. Սրվանձտյանը<sup>26</sup>, Իս. Դարությունյանը<sup>27</sup>, Տ.Պալյանը<sup>28</sup> և ուրիշներ, որոնց ընդունակ քննարկել տարրեր տեսանկյուններից:

Նշանագրերին համոզիչ մեկնաբանություններ են տվել ակադ. Հր. Աճառյանը<sup>29</sup> և պրոֆ. Ա.Գ.Աբրահամյանը<sup>30</sup>: Նրանց ջանքերով գիտական շրջանառության մեջ են դրվել ավելի քան 700 նշանագրեր:

Այդ նշանագրերից են՝



## ՎԻՄԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Վիմագրությունը պատմագիտական օժանդակ դիսցիպլին է: Այն արտացոլում է հասարակության զարգացման պատմական իրողությունները, լեզուն և լեզվական մտածողությունը, քաղաքական, տնտեսական, իրավական զարգացումների աստիճանական փուլերը, հավաստի տեղեկություններ և պարունակում պատմական անցուղարձերի ու գործիքների մասին:

Վիմագրությունն, իրեն առանձին գիտաճյուղ, սերտորեն առնչվում է հնագրության (ուղեօգրաֆիա) հետ, սակայն եթե հնագրությունը ուսումնասիրում է գրչության արվեստն ու զարգացման աստիճանական փուլերը, առանց խորանալու բնագրի բովանդակության մեջ, ապա վիմագրագիտությունը պատմական սկզբնաղբյուրները դիտում է իրեն առանձին ուսումնասիրության առարկա:

Դնագրության ոլորտում են գտնվում պապիրուսագիտությունը (պապիրոլոգիա), դրանագիտությունը (հնամատիկա) և կնքագիտությունը (սփրացիտիկա)<sup>33</sup>:

Վիմագրություն բառը կազմված է հայերեն վեմ (բար) և գրություն եղություներից և բառացի նշանակում է գրություն բարի վրա՝ բարագրություն<sup>34</sup>:

Միջազգային տերմինաբանությամբ առարկան կոչվում է էպիգրաֆիկա (հուն. էպի-մակ, վրա, երես և գրաֆիկա (գրություն), որ բարգմանաբար նշանակում է նաև գրություն). հենմու. էպիտետ-մակրի, էպիտաֆիա-մակագրություն տապանի վրա՝ տապանագիր և այլն:

Հայերենում գրություն է նաև արձանագրագիտություն եզրույթը, որն առավել լայն ընդգրկում ունի, քան վիմագրագիտությունը:

Վիմագրագիտության նպատակն է ուսումնասիրել հիմնականում բարի վրա փորագրված կամ հատուկ մելանով (կամ այլ ներկանյութով) մակագրված արձանագրությունները: Իրեն պատմական հավաստի սկզբնաղբյուրներ, վիմագրություններն ունեն աղբյուրագիտական հույժ կարևոր արժեք, քանզի համինի սանում են ժողովուրդների կերտած վստահելի «քարակերտ մատյանները»<sup>35</sup>:

Վիմական բնագրերը տասնյակ հազարներով սփոյված են Հայկական լեռնաշխարհի բազմաթիվ վայրերում կառուցված տաճարների, ամրոց-դղյակների, կամուրջների, ջրի ակունքների մերձակայքում, խաչքարերի, տապանաքարերի և հասարակական շենքների վրա:

Դնագույն վիմագրական տեքստեր կարելի է համարել ժայռապատկերները (պետրոգլիֆներ, իջազեր), որոնք կերտված են ժայռերի կամ ժայռաբեկորների բնականից հարթ մակերեսներին մ.թ.ա. 7-ից 1-ին հազարամյակների ընթացքում: Ժայռապատկերներում արտացոլված են նեոլիթ-ենեոլիթյան դարաշրջա-

նում ապրած մարդու պարզունակ ընկալումներն ու պատկերացումները իրեն շրջապատող երևույթների, հավատալիքների ու սովորույթների, առօրյա կենցաղի, ինչպես նաև տոմարական հաշվումների վերաբերյալ։ Առանձնապես բազմաքանակ են կենդանական աշխարհի՝ մանր ու խոշոր եղջերավոր անասունների, ինչպես նաև գիշատիչ կենդանիների սիենատիկ գծապատկերները։ Դարուստ և բովանդակալից ժայռապատկերներ ունեն գեղամա<sup>38</sup> և Սյունյաց լեռները։ Այդ նմուշներն ընդորինակվել և գիտական շրջանառության մեջ են դրվել հնագետ-պատմաբաններ Դ. Մարտիրոսյանի, Դ. Իսրայելյանի, Գր. Կարախանյանի, Պ. Սաֆյանի և ուրիշների ջանքերով<sup>39</sup>։

Վերջին տարիներին հայտնաբերված ժայռապատկերներից և քարակերտ արձաններից առավել կարևորվում են գեղաքրունիքի մարզի Մարտունու շրջանի Չոլաքար (Չոլախաչ) գյուղի հանդամասերից մեկում գտնված մարդկային կերպարանքներն ու աղավնակերպ ժայռաքանդակները, ինչպես նաև շրջանածկ գծանկարները, որոնք խորհրդանշում են արևի պաշտամունքի առկայությունը նախնադարյան հասարակության մեջ։

Պատահական չէ, որ ուսումնասիրողները ժայռապատկերներն իրավամբ համարում են «Քարե հանրագիտարաններ»<sup>40</sup>։

Մ.թ.ա. 9-6-րդ դարերում իրեն պաշտոնական գրագրության նշանագրեր հայաստանում լայն կիրառում ունեցան սեպագրերը կամ թևեռագրերը,<sup>41</sup> որոնք որոշ մասնագետների կարծիքով, չեն եղել ժողովրդա-խոսակցական լեզվի և մտածողության արտահայտիչները։<sup>42</sup> Ա. Մովսիսյանի կարծիքով Վանի թագվորության շրջանում կիրառվել են «Երեք գրային համակարգեր. միջազգետքան սեպագրիք՝ ասուլերեն, տեղական ոճի սեպագրիք՝ բիայնական սեպագրության լեզվով, և բնիկ հայաստանյան ծագում ունեցող մեհենագրերը՝ իիերոգլիֆները»։<sup>43</sup> Նա չի առարկում Ի. Մ. Ղյակոնովին, ըստ որի «բիայնական սեպագրությունը պետք է ստեղծված լինի դեռևս թ. ա. 14-13-րդ դարերում՝ ծագելով Միտանիի և խեթական տերության գրչության դպրոցներից»։<sup>44</sup>


Սեպածն նշանագրերով շուրջ 600 արձանագրություններ են գտնվել Արարատյան (Ուրարտուի) մայրաքաղաք Վան-Տուշպայից, Երևանից, Աևանի ավագանից, Շիրակից, Զանգեզուրից և այլ վայրերից։ Շնորհիվ Էրեբունի (Արին Բերդ) ամրոցում 1950 թ. սեպտեմբերի 25-ին հայտնաբերված Արգիշտի թագավորի արձանագրության՝ տեղեկանում ենք, որ Հայաստանի ներկա մայրաքաղաքը՝ Երևանը հիմնադրվել է մ.թ.ա. 782 թվականին։




Նկար 1

Ժայռապատկերներ (Սյունիք)

Ահա այդ սեպագիր արձանագրության թարգմանությունը.



Նկար 2  
Ժայռապատկերներ (Սյունիք)



«Խալդի աստծու մեծությամբ Արգիշտին՝ Մենուայի որդին այս անառիկ ամրոցը կառուցեց և անվամեց Երեբունի քաղաքը ի հզրություն Բիայնիայի և ի ահաբեկում թշնամու երկրի: Արգիշտին ասում է. հողն այստեղ ամայի եր, այստեղ ես մեծ գործեր կատարեցի: Խալդի աստծու մեծությամբ, Մենուայի որդին՝ Արգիշտին, Բիայնիայի հզրոր քագավորը, Տուշա քաղաքի տերը».<sup>43</sup>

Երեբունին հիմնադրելու մասին Արգիշտին հիշատակություն է թողել նաև Կա- նի Խորխոյան արձանագրությունում, որը հայտնաբերվել է 1916 թվականին:

Մեպագրերից հետո Դայաստանում սկսվեց կիրառվել արամեերենը (արա- մեական գիրը), որը պատկանում էր լեզուների սեմական ընտանիքին և իբրև մի- ջազգային լեզու լայն կիրառում է ունեցել նաև Դայաստանում:<sup>44</sup>

Արամեական արձանագրություններ, հիմնականում «սահմանաքարեր», հայտնաբերվել են Սևանի ավազանում, Զանգեզուրում և այլուր: Դրանք համա- պատճենավորություններ են, որոնցում նշվում են իշխանավորներին ար- քայի անունից տրվող կամ նրան ենթակա տարածքների սահմանները:

Ամենածավալուն արամեերեն արձանագրությունը, 9 տող, Դայաստանում հայտնաբերվել է Միսիանից Գորիս ընթացող մայրուղու շինարարության ժամանակ: Այս, ինչպես և Գառնիի արձանագրության վերծանությունը կատա- րել է հայտնի արևելագետ Ա. Գ. Փերիխանյանը:<sup>45</sup>

Այլալեզու վիմագրերը քաջ ծանոթ են եղել մեր միջնադարյան պատմիչներին: Սովոր Խորենացին նշում է. «Ոչ միայն այս (խոսքը Վանի ժայռի արձանագրության մասին է-Գ. Գ.), և այլև ի բազում տեղիս յաշխարհին Դայոց արձանն հաստատեալ նովին գրով յիշատակ ինչ էլ հրամայէ (Շամիրամ) գրել. և ի բազում տեղիս սահմանն ուվին գրով հաստատէր»:<sup>46</sup>


Պատմահայրը Վկայում է «Արտաշիսյան սահմանաբարերի», Գառնիի հունարեն արձանագրության<sup>47</sup>, ինչպես նաև «հելենացի գրով» այլ վիմագրերի մասին:<sup>48</sup>

7-դարի պատմիչ Դովիհան Մամիկոնյանը նշում է, որ քուրմերի և քրիստոնյաների ճակատարտից հետո սպանվածների ողակները լցուցին մի փոփի մեջ և հուշարձան կանգնեցրն վրան մակագրելով.

«Առաջին պատերազմ, որ եղել յոյժ սաստիկ պատերազմին գլխաւոր Արծան քրմապետին, որ կայ այսր ի թաղման եւ ընդ նմա արս հազար երեսուն եւ ութ եւ զայս պատերազմ արարաք Վասն Գիսանեայ կող եւ վասն Քրիստոսի»:<sup>49</sup>

Զանգեզուրում հայտնաբերված արամետրեն վեմագրի վերծանությունը թարգմանաբար

«... Գյուղը պատկանում է Արտաշես Արքային, Բարուն, Չարեհի որդուն և Նելկիառին, թագադիր, Աշխարհաստի որդուն»:





Գառնիի հունարեն արձանագրության թարգմանությունը.

«Դելիս Տրդատը, թագավորը Մեծ Դայրի... որպես դեսպոտ հիմնեց Ազ... թագուհու համար այս անառիկ բերլող թագավորության 11-րդ տարում: Մեննեասը իշխանավորի հովանավորության ներքո, վճարում է որպես լիսուրգոս մեծ եռանդով և շնորհակալությամբ գինը՝ Սատե Վկայի ներկայությամբ» («ԱՄ Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1956, N 3, էջ 53-54):

Այս հուշակոթողի արձանագրությունը, պատմիչի Վկայությամբ, «գրեցին ասորի եւ հելենացի գրով եւ յոյն եւ խմայելացի նշանաւ».<sup>50</sup> Նա նշում է նաև «ի տախտակս պղնճի»<sup>51</sup> Գրիգոր Լուսավորչի կողմից արձանագրություն փորագրել տալու, ոենուս կիրավովոյ «քետոների նշանների» («գրեւես նշանին») այսինքն՝ սեպագրերի մասին:<sup>52</sup>

Նախամաշտոցյան շրջանում, արամետրենից հետո, առավել գործածական է եղել հունարենը, որով մեզ են հասել տասնյակ վիմագրեր Տիգրանակերտից,<sup>53</sup> Ասպարանից,<sup>54</sup> Արմավիրից<sup>55</sup> և այլ Վայրերից: Դայաստանում գտնվել են նաև լատինատար և արաբատար արձանագրություններ: <sup>56</sup>

Լատիներեն 6 արձանագրություններ են հայտնաբերվել Խարբերդում, Վաղարշապատում, Արտաշատում և այլուր: Ահա Արտաշատի արձանագրությունը. դարշապատում, Արտաշատում և այլուր:



Թարգմ. «Իմպերատոր Կեսար աստվածային, Ներվա Տրայանոս, Օպտիմոս (լավագույն), Օգոստոս (վեհափառ), Գերմանիկոս (Գերմանական), Դակոն (Դակիական), Պարթևիկոս (Պարթևական), Գերագույն քուրմ, Սարսփնոս (մեծագույն), Միջամատ իշխանությամբ (օժոված) 20 անգամ. Կայսր (հոչակված) 13 անգամ, հյուպատոս 6 անգամ (հայրենիքի հայոց), Ակութական IV լեգենը կատարեց (կանգնեցրեց)». (ՊԲՀ, 1967, N 4, էջ 308)

# ՀԱՅԱՏԱՌ ՎԻՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱՎՈՐՈՒՄԸ

«Նրանց (հայերի) պատմությունը  
քարերի և իրենց երկրի ժայռերի վրա գրված  
արձանագրություն է»:

## Սեն-Մարտեն

Դայերեն (Մաշտոցյան) գրերով վիմագրությունը սկիզբ է առել 5-րդ դարում գրերի գյուտից հետո:

Եղիշե պատմագիրը, խոսելով 451 թ. գոյամարտի մասին, վկայում է, որ Ավարայրի ճակատամարտում զոհվածներից շատերի աճյունների վրա հետագայում կանգնեցնում էին մահարձաններ՝ նահատակվածների անունների հիշատակ։

«Բագում արձանք էին կանգնեալ յանուն նոցա և անուանք իւրաքանչիւր նշանակեալ ի նոսա»:<sup>57</sup>

Ավանդություն է պահպանվել այն մասին, թե ինչպես Դոփիսիմե արքայադուստրը մահամերձ վիճակում թախանձում է հորը՝ Աշոտ Գ Ողորմածին (953–977) իր վախճանից հետո հիշատակագրություն փորագրել տալ «Ի վերայ վիմի միջ» քանզի «Քուղքըն եղծանիցին ի հրոյ կամ ի ջրոյ, սակայն քարեայ արձանն անջինց մնասց յալիտեան»։<sup>58</sup>

Դայ ժողովոյի «Քարակերտ նատյանները» երկրի քաղաքական անքարենպաստ պայմանների պատճառով մնում էին գիտնականների տեսադաշտից դուրս թե պատմիչներն ըստ անհրաժեշտության երթեմն վերծանել և օգտանանկեր ճանապարհորդ–աշխարհագիրները, որոնք շրջագայությունների ժամանակ չեն զլացել ընդօրինակել և իրենց գրքերում զետեղել հարյուրավոր վիմագրեր։ Սակայն նպատակասլաց կերպով վիմագրերը վերծանել և իրոն պատփանոս Օրբելյանը։

## ՎԻՄԱԳՐԱԳԵՏ ՊԱՏՄԻՉՆԵՐ

### 1. ՍՏԵՓԱՆՈՍ ՕՐԲԵԼՅԱՆ (1250–ական թթ.–1303)

Միջնադարի ականավոր պատմագիր, կրոնական, քաղաքական և մշակութային գործիչ, վիմագրագետ Ստ. Օրբելյանը ծնվել է պատմական Սյունիքի ծղուկ գավառում (այժմյան Սյունիքի մարզի Սիսիանի ենթամարզ) 13-րդ դարի 50-ական թթ.։ Նրա հայրը Սյունիքի իշխանաց իշխան, հայոց և վրաց արքեկան (զահաժառանգի խնամակալ) Տարսայիծ Օրբելյանն էր, մայրը՝ «բարեպաշտ» (տիկին) Արուց Խաթունը։ Սանկուց Ստեփանոսը որդեգրվել է հորեղբորը՝ զահետիկին։ Արուց Խաթունը Սահմանական կրթությունը ստացել է որեց իշխան Մարտահին (Սնբատ «արքային»)։ Նախնական կրթությունը ստացել է Տարեկ վանքում, ուր այլ առարկաներին զուգընթաց երաժշտության դասեր է վերցրել նշանավոր վանահայր Դայրապետ Եպիսկոպոսից։

1273 թ. հորեղբոր մահվանից հետո, զահերեցությունն անցնում է Տարսային ճիմ, որը և տեղափոխվում է Կայոց ծոր, բնակություն հաստատելով նախ՝ Արփա (Արենի), ապա՝ իշխանանիստ Եղեգիս գյուղաքաղաքում։

1282 թ. Տարոնից Արևելյան Դայաստան գաղթած գիտնական–վարդապետ Ներսես Սշեցու ջանքերով, Պոռջան և Օրբելյան տոհմերի նյութական և բարոյական օժանդակությամբ բացվում է Գլածորի ուսումնա–գիտական Կենտրոնը, որի առաջին ունկնդիրներից է նաև լինում պատման Ստեփանոսը։ Օրբելյան իշխանները ցանկանում են իրենց տոհմի մենաշնորհը դարձնել նահանգի ոչ միայն քաղաքական իշխանությունը, այլև հոգևոր նվիրապետությունը։ Թերևա, սա էր իհմնական պատճառը, որ Մեծն Տարսայիծ իշխանը Գլածորի համալսարան ավարտած իր շնորհալի զավակին ուզում էր տեսնել Սյունյաց 12 զավացների նետրուպությունը։ 1287 թ. արևելյան Եպիսկոպոսների հանճնարարականով Ստեփանոս վարդապետը մեկնում է Կիլիկիա՝ հայոց հարյապետից Եպիսկոպոս ծեռնադրվելու ակնկալիքով։ Այստեղ եղած երեք ամիսների ընթացքում նա մտերիմ հարաբերություններ է հաստատում Լևոն Գ թագավորի, ազնվականների և բարձրաստիճան հոգևորականության հետ, խորամուխ է լինում կաթողիկոսարանի հարուստ գրապահոցների մեջ, ուսումնասիրում է Կիլիկիան հայկական թագավորության քաղաքական–տնտեսական և մշակութային կյանքական վականություններ է առաջարկում Ստ. Օրբելյանը վերադառնում է հայրենից։

Նորընծա թեմական առաջնորդին մեծ դժվարությամբ հաջողվում է միավո-

թել Տարևի և Նորավանքի Երկփեղկված աթոռները՝ մեկ գավազան, մեկ հոգևոր հովիկ կարգախոսով։ Ստ. Օրբեյանը Եկեղեցու հեռացնում է նաև «գայլացեալ հովիւներին», որոնք մակաբույժ կյանք էին վարում։

Իբրև բարեկիրդ և մեծահարուստ իշխանազուն, նա առանձնակի ուշադրություն է դարձնում նահանգի հոգևոր-կրթական օջախներին, վերականգնում է մոնղոլ խաներից ստացած «ինչոր»—ական իրավունքը, ապահարկել է տալիս իր տնօրինության տակ եղած վանքերն ու Եկեղեցիները, նպաստավոր պայմաններ ստեղծելով Գլածորի համալսարանի ուսուցչապետների և սաների համար։

Ստ. Օրբեյանի գրական ժառանգությունից մեզ են հասել մի շարք ստեղծագործություններ,<sup>59</sup> որոնց մեջ առանձնանում է «Պատմութիւն տանն Սիսական» պատմագիտական երկը, որը նա ավարտին է հասցրել 1297 թ. Վայոց ծորի Նորավանքում։

Նա առաջին հայ պատմիչն է, որ ընդորինակել և իր «Պատմութեան» էջերու գետեղի է բազմաթիվ վիմական արծանագրություններ, որոնց գիտական արժեքը՝ իբրև պատմական սկզբաղբյուրների, դարից դար առավել կարևորվում է հայագիտության համար։

Ստ. Օրբեյանի վերծանությունների շնորհիվ մեզ են հասել Տարևի, Վանեվանի, Մաքենյաց վանքի, Նորավանքի և բազմաթիվ այլ պաշտամունքային կենտրոնների պատերին փորագրված վիմագրությունները, որոնցից շատերն այժմ եղջակած են, քայլայված կամ չարամտորեն ոչնչացված։ Ստ. Օրբեյանի «Պատմութեան» մեջ վկայակոչված արծանագրությունները արժեքավոր տեղեկություններ են հաղորդում միջնադարյան Դայաստանի քաղաքական, տնտեսական և իրավական հարաբերությունների, ժողովրդից գանձվող հարկերի ու տուրքերի և դրանց վերացման՝ ապահարկության ձևերի ու եղանակների, իշխանական տոհմերի, ինչպես նաև երկրի մշակութային կյանքի տարբեր ոլորտների մասին։

Ստ. Օրբեյան-վիմագրագետի դիմանկարը ցույց տալու համար՝ զուգահեռ մեջքերենք Վանեվանի Ս. Գրիգոր Եկեղեցու 903 թ. արծանագրության օրբեյանական ընթերցումը՝ բաղդատելով այն գիտական իրատարակության հետ։

### Ըստ Ստ. Օրբեյանի

«Յանուն Աստուծոյ ես Շապուհ Բագրատունի՝ Յայոց սպարապետ, տերանց տէր, որդի Աշոտոյ Յայոց թագաւորի, ի ժամանակս Յայոց թագաւորի մեծին Սմբատայ՝ հարազատ եղոր իմոյ, և Վերադիտողի Յայոց հայրապետի տեսան Յովիաննիսի, իմացայ և ժամենայ, թե ամենայն փառք և մեծութիւն սպառելոց են և վաղիւ կորնչելոց։ Մեծափափագ տեմչամօք վերակացու և տեսուչ առնելով գրոյր ին Մարիամ Սիւնեաց տիկին, յիմունս իշխանութեան ի Վանեվանս տուն Աստուծոյ կանգնեալ վիմատաշ կոփածովք, շատածախ գանձիք և մեծացան վաստակովք կատարեալ. Թերևս լիցի ինձ ողորմութիւն յայնմ աւուր, յորժան բանքն սպառին և գործքն թագաւորեն։ Եւ տուաք ի թեզ Վանեվանուց վանական հայր Արքահամ, աղօթել և վայելել, և որ այլք յետ քո յաջորդեն և պաշտօնեայք խորանին՝ յորժան ժողովք միաբան յաջօթս, և կերակրի յանմահական կերակրոյն, յիշեսքիք զիս և զիմսն, զի արասց ողորմութիւն ողորմածն Աստուծած։ Եւ եսու հինգ գեղոց սահման՝ Կորաքարն, Աղարյ վանսն, Շաւառնահոլն, Գետամէջն, Կրանոցն, Գետավանաց ծովն, Երկու հարիւր վարսուն դրամ ի Կորաքարն, հինգ հարիւր Երեսուն ի Բրտեմեացն, վեց հարիւր վարսուն յԱղարյ վանացն ծովէ, իմն հարիւր իննսուն ի Կարբին գետերեն և նաւերեն. որում մի ոք իշխեսց հակառակել։ Եւ թէ յանդգնի ոք՝ յերեք հարիւր ութ և տասն հայրապետացն նզուեալ եղիշի, և մասն և բաժին զՅուդային առց։ Ի բոլիս Յայոց 352 (903).<sup>61</sup>

### Ըստ «Դիվանի»

«Յանուն Ալստուծոյ. Ես Շապուհ Բագրատունի, Յայոց սպարապետ, տերանց տէր, որդի Աշոտոյ Յայոց թագաւորի, ի ժամանակս Յայոց թագաւորի մեծին Սմբատայ՝ հարազատ եղոր իմոյ, և Վերադիտողի Յայոց հայրապետի տեսան Յովիաննիսի, իմացայ և ժամենայ, թե ամենայն փառք և մեծութիւն սպառելոց են և վաղիւ կորնչելոց. Մեծափափագ տեմչամօք վերակացու և տեսուչ առնելով գրոյր ին Մարիամ Սիւնեաց տիկին, յիմունս իշխանութեան ի Վանեվանս տուն Աստուծոյ կանգնեալ վիմատաշ կոփածովք, շատածախ գանձիք և մեծացան վաստակովք կատարեալ. Թերևս լիցի ինձ ողորմութիւն յայնմ աւուր, յորժան բանքն սպառին և գործքն թագաւորեն։ Եւ տուաք ի թեզ Վանեվանուց վանական հայր Արքահամ աղօթել և վայելել. Եւ որ այլ յետ քո այլ յաջորդին եւ պաշտօնեայք խորանիստ յորժան ժողովքիք միաբան յաղաւս՝ եւ կերակրի անմահական կերակրոյն, յիշեսքիք զիս և զիմսն, զի արասց ողորմութիւն ողորմածն Աստուծած։ Եւ եսու հինգ գեղոց սահման՝ Կորաքարն, Աղարյ վանսն, Շաւառնահոլն, Գետամէջն, Կրանոցն, Գետավանաց ծովն, Երկու հարիւր վարսուն դրամ ի Կորաքարն, հինգ հարիւր Երեսուն ի Բրտեմեացն, վեց հարիւր վարսուն յԱղարյ վանացն ծովէ, իմն հարիւր իննսուն ի Կարբին գետերեն և նաւերեն. որում մի ոք իշխեսց հակառակել։ Եւ թէ յանդգնի ոք՝ յերեք հարիւր ութ և տասն հայրապետացն նզուեալ եղիշի, և մասն և բաժին զՅուդային առց։ Ի բոլիս Յայոց 352 (903).<sup>60</sup>

Արծանագրության մնացած մասը չենք մեջբերում այլոց հավելում լինելու պատճառով:

Ինչպես տեսնում ենք, Ստ. Օրբելյանն այս վիմագրությունն օգտագործել է իրեն պատմական սկզբնադրյուր, կատարելով մասնակի շտկումներ, որոնցից եապես չի տուժել բնագրի բովանդակությունը: Պատմիշը ավելացրել է միայն անեծքի մասը, որպիսին, իրոք, բացակայում է Վանեվանի արծանագրության մեջ:

Ակադ. Դ. Օրբելին, նկատի ունենալով Ստ. Օրբելյանի վիմագրագիտական վաստակը, նրան է վերագրում «հայկական արծանագրությունների առաջին հավաքողի» պատիվը:<sup>62</sup>

Մեծանուն պատմագիրը վախճանվեց 1303 թ. և ամփոփվեց Ամաղուի Նորավանքի՝ Օրբելյան իշխանազունների տոհմական գերեզմանատանը: Տապանաքարին փորագրված է.

«Թվ. :ՉԺԲ: (1303). ԱՅՍ Է ՇԻՐԻՄ ՀԱՍԳԱՏԱԼ ԱՂՆ ՄԵԾԻ  
ՄԵՏՐԱՊԱՒԼԻՏԻՆ ՍԻՒՆԵԱՑ ՍՏԵՓԱՆՈՒԻ»:<sup>63</sup>

## 2. ԶԱՔԱՐԻԱ ՔԱՆԱՔԵԽՈՑԻ (1627-1699)

Ուշ միջնադարի ականավոր պատմագիր, վիմագրագետ Զաքարիա Քանաքեղին ծնվել է 1627 թ. Քանաքեր ավանում: Պատանի հասակից եղել է կրոնավոր: Տարիներ շարունակ գրադիւն է ուսուցչական աշխատանքով: Հովհաննավանքում վանահայր եղած ժամանակ գրել է «Պատմագրութիւն» խորագիրը կրող աշխատությունը, որի 3-րդ մասը ամփոփում է հիշյալ վանքի պատերին փորագրված արծանագրությունները:

Խոսնելով Զաքարիա Քանաքեղու մասին, ակադ. Մ. Աբեղյանը նկատում է.

«Զաքարիա Սարկավագը բացի մատենագիրներից և գրքերի հիշատակարաններից՝ օգտվում է նաև արծանագրություններից. Նա ընդօրինակում է պատերի վրա եղած արծանագրությունները և մանրամասն ծշտությամբ գետեղում է իր «Կոնդակի» մեջ, որով Զաքարիան համեմատում է մեր մատենագրական, արծանագրական թանկագին հիշատակները ժողովողների նախահայրը»:<sup>64</sup>


Մեծ գրականագետի կարծիքն ընդունելի է այն առումով, որ Զաքարիա պատմագիրը վերօնանել և ընդօրինակել է Հովհաննավանքի բոլոր կարևոր վիմագրերը, իսկ Ստ. Օրբելյանը՝ ապրելով Զաքարիայից շուրջ 400 տարի առաջ, վիմական բնագրերն օգտագործել է խիստ ընտրությամբ, ըստ անհրաժեշտության:

## ՀԱՎԱՔԶԱԿԱՆ ԱՇԽԱՏԱԱՆՔԵՐՈՅ ԽԻ-ԽԱՐԵՐՈՒՄ

Վիմական արծանագրություններ հավաքելու և հրատարակելու աշխատանքները ծավալվեցին 19-րդ դարում: Ներսես Աշտարակեցին 1825 թ. օգոստոսի 31-ին Սամահնի վանքի առաջնորդ Հարություն վարդապետ (հետագայում արքեպիսկոպոս) Բարսեղյանին հիջած նամակով առաջարկում է ուշադրույթը արտագրել վանքերի, եկեղեցների, հնագույն գերեզմանաբարերի վրա թագմաբ արտագրել վանքերի վանքերի հապատակով:<sup>65</sup>

Դայոց «քարե մատյանները» վերձանելու, ընդօրինակելու և հրատարակելու ասպարեզում վիթխարի գործ կատարեցին Մինաս Բժշկյանը,<sup>66</sup> Հովհաննես Շահիսարունյանը,<sup>67</sup> Սարգիս Զալալյանը,<sup>68</sup> Մկրտիչ Եմինը,<sup>69</sup> Սակար Բարխունյանը,<sup>70</sup> Մեսրոպ Սմբատյանը,<sup>71</sup> Քաջերբունին (թժ. Գ. Տեր-Հովհաննիդարյան),<sup>72</sup> Հովհաննես Դրիմեցին,<sup>73</sup> Արիստակես Սեղրակյանը,<sup>74</sup> Երվանդ Լալայանյան,<sup>75</sup> Խաչատուր Քուչուկ-Հովհաննիսյանը,<sup>76</sup> Մելիքսեթ Բեկը,<sup>77</sup> Կարապետ Բասնը,<sup>78</sup> և շատ ուրիշ երախտավորներ:


Առանձնակի պետք է նշել մեծանուն հայագետ Ղևոնդ Ալիշանի՝ իրեն տեսական մասին պատմագետությունը, որի մասը ամփոփում է հիշյալ վանքի պատերին փորագրված արծանագրությունները:



Մինաս Բժշկյան



Սարգիս Զալալյան



Սակար Բարխունյարյան



Երվանդ Լալայան



Մեսրոպ Սմբատյան



Ղևոնդ Ալիշան

Կարողացել է իր գրքերում<sup>79</sup> գետեղել նախորդ վերծանողների և իրեն թրավագողների կողմից ուղարկված հայուրավոր վիճագրեր, որոնք տրվել են շատ դեպքերում բոլորովին նոր ընթերցմանը կամ էական ուղղումներով:

Դ. Ալիշանը գտնում էր, որ հայկական վիճագրերը «ոչ նուազ պատուական աւանդը են ազգային պատմութեան», քանզի «անխար հայելիք են հանձարոյ եւ ոգոյ նախմեաց մերոց»:<sup>80</sup> Եվ քանի որ ժամանակը «ամ ըստ ամէ եւ օր աւուր կրծէ, ծախէ եւ ծածկէ զնոսին», խորհուրդ է տալիս առանց հապաղելու զբաղվել վիճագրերի հավաքան աշխատանքներով:<sup>81</sup>

Ակադ. Դ. Մանանյանը վիճական արձանագրությունները համարում էր «առաջնակարգ աղբյուրներ», առանց որոնց հնարավոր չէ հանգամանորեն լուսաբանել միջնադարյան Հայաստանի իրավա-քաղաքական և հատկապես սոցիալական կյանքը:<sup>82</sup> Համանան կարծիք են հայտնել Ն. Մառը<sup>83</sup> և ուրիշները:

1912 թ. «Դանդու Ամսօրեայ» պարբերականում ականավոր լեզվաբան Դ. Ա. ճառայնը տպագրեց հայուրարավորի այն մասին, որ ինքը պատրաստվում է հրատարակել «Հայարձան» խորագրով մի ժողովածու և խնդրում է իրեն ուղարկել վիճական բնագրերի ընթօրինակումները:<sup>84</sup>



Կարապետ Կոստանյան

1913 թ. Ն. Յառի ռուսերեն առաջարանով Սանկտ-Պետերբուրգում տպագրվեց ճանաչված հայագետ Կարապետ Կոստանյանի կազմած «Վիճական տարեգիրը»<sup>85</sup> ուր ամփոփված էին 1328 արձանագրություններ՝ դասավորված ժամանակագրական սկզբունքով: Անշուշտ, սա հեռու էր գիտական կորպուս-ժողովածու կոչվելուց, թենի երկար տարիներ հանդիսացավ հայագետների սեղանի գիրը: Այստեղ բացակայում են վիճագրերի լուսանկարները, գրչագրերը, էտամպային կրկնօրինակումները: «Վիճական տարեգիրը» տարբեր հեղինակների աշխատություններից բանաբարձակած ժողովածու է:

Բոլոր նախորդ հրատարակիչները հնարավորություն և միջոցներ չունեին հայկական վիճագրերը տպագրել եվրոպական կորպուս-ժողովածուների մակարդակով: Սակայն նրանց կատարած անուրանալի է և մեծ գնահատանքի արժանիք:

19-րդ դարի երկրորդ կեսին հարաբերականորեն նպաստավոր պայմաններ էին ստեղծվել վիճագրագիտությանը զարկ տալու համար. հանդես էին եկել համալսարանական լրտությամբ նվիրյալներ՝ թերովք Պատկանյան, Շովիաննես Ամիկի, Ներսես Ներսիսյան, Մկրտիչ Էմին, Գրիգոր Խալաթյան, որոնք Պետերբուրգի համալսարանում և Լազարյան ճեմարանում պատրաստում էին հայագետ-կովկասագետներ: Նրանց սամերից և գրքընկերներից էին Ն. Յառ, Մառը, Դ. Օրբելին և ուրիշներ, ինչ փուլք, թե նրանք գործելու էին կամ գիտական ժրագրեր էին մշակելու Հայաստանի սահմաններից հեռու, Ռուսական կայսրության նայրաբաղաքներում, Կովկասում կամ այլուր:

## ՀԱՅԿԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՎԻՄԱԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱԿՈՐՈՒՄԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

### 1 ՆԻԿՈՂԱՅՈՍ ՄԱՐ (1864–1934)

Դայ վիճագրության իբրև առանձին գիտաճյուղի զարգացման մեջ երախտավորները հանդիսացան Ն. Յառ Մառը և Դ. Ա. Օրբելին: Ուսումնասիրելով նրանց թողած գիտական ժառանգությունը, հիրավի, զարմանք ու հիացմունք է առաջացնում այս մեծանուն այրերի նվիրվածությունը հայ ժողովրդի անցյալի ծագույթի, նաև ակադեմիական գրավոր աղբյուրների նկատմամբ:

Ն. Մառը առաջին անգամ Հայաստան եկավ 1890 թվականին, իսկ 1892-ին ճառայնը տպագրեց հայուրարավորի այն մասին մասին մասին մասին: Ն. Մառը սկսեց Անի քաղաքի պեղումները: 1909–1911 թթ. Յա. Ի. Սիմիռնովի և ճարտարագետ Կ. Կ. Ռոմանովի ընկերակցությամբ նա պեղումներ կատարեց Գառնիի հեթանոսական տաճարի ավերակներում, սակայն մեծ գիտնականի ուշադրության կենտրոնը միշտ մնում էր Անին իր խորհրդավորությամբ:

Խոսելով Բագրատունյաց հոչակավոր մայրաքաղաքի մասին՝ Ն. Մառը գրում է. «Անին գիտության համար թանկ է ոչ միայն հայկական արվեստի ստեղծագործություններով, այլև իր բոլոր վիճագրական և առարկայական հուշարձաններով»:<sup>86</sup> Ն. Մառի գնահատմամբ «Արձանագրությունները պարագանելու մեջ են շատ տվյալներ ինչպես ժամանակագրության և տիրող տոհունակում են շատ տվյալներ ինչպես ժշտման, այնպես էլ հարուստ տեղեկություններ են պարունակում ժամանակի հասարակության ներքին կյանքի լուսաբանման համար մայրաքաղաքի և ամբողջ իշխանության ու եկեղեցական կազմակերպչական ձևերի, տուրքերի համակարգի և հարկերի տեսակների ու շատ այլ հարցերի վերաբերյալ»:<sup>87</sup>

Դայ վիճագրական հուշարձանների կապակցությամբ Ն. Մառի շարադրած հողվածներն ու գեկուցագրերը<sup>88</sup> ազնիվ հոգատարության արգասիք են:

Ռուսաստանի կայսերական հնագիտական հանձնաժողովը նշանակած Ն. Մառի հոգատարությունը կազմակերպություն բարձր են գնահատվում հայերեն, ինչպես նաև վրացերեն մագրերը, հետևաբար կոչ է արվում անհապաղ ծեռնամուխ լինել հավաքչական աշխատանքներին:<sup>89</sup>

Ն. Մառն առաջարկում է կազմակերպել վիճագրական արշավախումը՝ հետևյալ կազմով. Թ. Ժորդանիա (պատմաբան), Ա. Քութաբելաձե (վրացերենի դոկտորական աշխատանք), Դ. Տեր–Մկրտչյան (հրավունքի դոկտորական աշխատանք), Ե. Թաղայշվիլի (պատմաբան), Գ. Տեր–Մկրտչյան (հրավունքի դոկտորական աշխատանք), Մ. Մանանյան (փիլիսոփայության դոկտորական աշխատանք), Ս. Մալխասյան (պատմաբան–գրականագետ), Մ. Տեր–Մովսիսյան (Սատոր), Ս. Մալխասյան (պատմաբան–գրականագետ), Ա. Տեր–Մովսիսյան (Սատոր): Ցանկություն են հայտնել արշավախումին մասնակցելու համար:



Ակադեմիկոս Նիկողայոս Մառը Անհում

- 24 -

խովը (Զավախիշվիլի), Ս. Արդոնցը և Ս. Տեր-Ավետիսյանը, որ այդ ժամանակ ուսանում էր կայսերական համալսարանի 4-րդ կուրսում:<sup>91</sup>

Ն. Մառը շահագործությամբ հետևում էր վիճագրական արշավախմբի կազմակերպման ընթացքին, ծգտելով նաև ֆինանսական միջոցներ հայրայթել արշավախմբի մասնակիցների և վիճական բնագրերի լուսանկարման համար:

Կայսերական հնագիտական հանձնաժողովը 1903 թ. մայիսի 12-ի թիվ 1221 որոշմամբ վիճագրական արշավախմբի ընդիհանուր դեկավար է առաջադրում Ն. Մառին: Ծրագրում նախատեսվում էր 10-ական նամուկ ծավալով հրատարակել «Դայերեն և Վրացերեն արձանագրությունների ժողովածու»-ները՝ օժտված գիտական ապարատով, հատկապես լուսանկարներով և գրչագրերով:<sup>92</sup>

1904 թ. մայիսի 23-ին կայացավ խորհրդակցություն, իսկ հնագիտական հանձնաժողովի համագումարը տեղի ունեցավ Թբիլիսիում հունիսի 10-ին: Ի թիվս այլոց, համագումարին մասնակցում էին Իվ. Զավախիշվիլին, Օ. Պ. Կարբելովը, Ա. Քութարելածեն, Երվ. Լալայանը, Յ. Մանանյանը, Ստ. Լիսիցյանը, Ստ. Մալխասյանցը, Ե. Թադաշչիլին, Ս. Տեր-Ավետիսյանը, Սեսրու Մագիստրոսը, Գր. Խալաթյանցը: Ն. Մառը ժողովականներին ծանուցում է, որ արդեն տպագրության են պատրաստ Երվ. Լալայանի կազմած (Գորիսի)<sup>93</sup> պրակը և Շիրակի արձանագրությունների ժողովածուն: Նա ներկաներին զգուշացնում էր հավաքչական աշխատանքների ժամանակ վիճական բնագրերը Վերժանելիս լինել առավել զգույշ՝ հինգ ունենալով նույնականության սկզբունքը: Պահպանելով գիտական էթիկայի տարրական պահանջները՝ մեծ գիտնական առաջարկում էր ստուգել և բնագրերի հետ նորից համեմատել Ղ. Ալիշանի և Ս. Բրոսենի նախկին ընթերցումները:

Ցավոք, Ն. Մառի կազմակերպական տքնաժան աշխատանքը սպասելի արդյունք չտվեց. հայ-վրացական միացյալ վիճագրական արշավախումբը չգործեց քաղաքական աննպաստ պայմանների և գիտնականների միջև ծագած տարածայնությունների պատճառով: Ի չիր դարձան մեծ հայագետի երազանքները:



Ակադեմիկոս Հովհաննես Օրբելի

## 2. ՀՈՎԱՆՆԵՍ ՕՐԲԵԼԻ (1887–1961)

Ցայ խոշորագույն արևելագետ, հնագետ և վիճագործ, գիտության անխոնջ կազմակերպիչ Հովհաննես Օրբելին ծնվել է 1887 թ. մայիսի 8(20)-ին Թուրայիս քաղաքում: Ավարտել է Թբիլիսիի արական 3-րդ գիմնազիան (1904 թ.), ապա սովորել և ավարտել է Պետերբուրգի կայսերական համալսարանի պատմաբանական ֆակուլտետը (1911 թ.)՝ ունկնդրելով Ն. Մառին, Ն. Անդոնցին, Իվ. Զավախիշվի-

լում, Յա. Սիմիոնովին: 1906–1917 թթ. մասնակցել է Անիի պեղումներին և այլ արշավախմբերի աշխատանքներին: 1912 թ. ընտրվել է Պետերբուրգի Շնագիտական ընկերության անդամ: 1914 թ. Պետերբուրգի կայսերական համալսարանում դասավանդել է հնագիտություն, Դայաստանի պատմություն, հայկական արձանագրագիտություն և քրոերեն: 1916 թ. և. Մատի հետ պեղումներ է կատարել Վանում, ապա նաև Գառնիում, Փարպիում, Աշտարակում և Անբերդում:

Իրեն հասարակական մեղադրող նա մասնակցել է ֆաշիստական Գերմանիայի պարագուխների Նյուրնբերգյան դատավարությանը (1946 թ.):

Յ. Օրբելին արտասահմանյան մի շարք համալսարանների (Լոնդոն, Թեհրան և այլն) պատվավոր դոկտոր էր և պրոֆեսոր:

Յ. Օրբելին իրավամբ համարվում է հայ գիտական վիմագրագիտության հիմնադիրը և «Դիվան հայ վիմագրության» մատենաշարի ստեղծողներից մեկը:

Դայ վիմագրության վերջանության սկզբունքները Յ. Օրբելին առաջին անգամ շարադրեց 1914 թ. սեպտեմբերի 6–ին Պետերբուրգի համալսարանում կարդացած իր դասախոսություններից մեջում, որը կոչվում էր «Հայկական վիմական արձանագրությունների գիտական նշանակությունը»: Դայերեն թարգմանությամբ այլ լույս տեսավ «Դիվան հայ վիմագրության» մատենաշարի 1–ին պրակում (1966 թ.):

1909 թ. օգոստոսին Ն. Մատի երաշխավորությամբ Ռուսաստանի Կայսերական ակադեմիայի պատմաբանասիրական բաժանմունքը Յ. Օրբելուն գործուղում է Խաչեն: Ապագա գիտնականն ընդամենը 17 օրվա ընթացքում վերջանում և ընօրինակում է շուրջ 270 վիմագրեր Գանձասարի վանքից, Վաճառից, Խաչիութից, Դավապուկից, Կոշիկ անապատից, Մեծառանից Ս. Դակորա վանքից, Խարբավանքից, Դադի վանքից և այլ վայրերից: Արցախում եղած ժամանակ Յ. Օրբելին նկատում է պատմությունը կեղծելու այնպիսի մի արգահատելի երևույթ, որը դժբախտաբար, շարունակվում է նաև հետագա տարիներին: Իրողությունն այն է, որ բեկերի մի խումբ Գանձասարի ընդարձակ կալվածները սեփականելու միտումով քերել և ոչնչացնել է տալիս այդ նշանավոր պատմա–նշակութային օջախի պատերին փորագրված գրությունները, որոնցում հանվան նշված էին վանքապատկան կալվածներն ու տիրույթները:

Դայ գիտնականներից թերեւս ամենից ավելի Յ. Օրբելին էր բարձր գնահատում հայերեն վիմագրերի պատմագիտական արժեքը:

«Հայաստանի առավել հետաքրքրական կողմը՝ ժողովրդի կյանքը, ոչ միայն ընտանեկան կենցաղը, կահկարասին, քաղաքային բարեկարգությունը, այլև նույնիսկ միջնադարյան հայ քաղաքի հասարակական կառուցվածքը,— գրում է նա, — մնում էին միանգամայն անհայտ, քանի դեռ չեն ուսումնասիրվել վիմական արձանագրությունները, հնագիտական հուշարձանների այն առաջին տեսակը, որը պատմագիտական աղբյուրնե-

րի շարքը մտավ շնորհիվ Ս. Բրոսեի և Ղ. Ալիշանի»:<sup>93</sup> Յ. Օրբելու կարծիքը, առանց վիմական արձանագրությունների մենք չենք կարող պատկերացում ունենալ Անիի քաղաքային վարչության ներքին կառուցվածքի, գոյություն ունեցած «քաղաքային խորհուրդների, ավագների խորհրդի, աչքի ընկնող ավագանու և այլնի մասին»:<sup>94</sup>

Պատմիչների երկերում հանդիպող հատուկենտ տերմիններն իրական նշանակություն կարող են ստանալ արձանագրական նյութի հիմնան վրա:

Յ. Օրբելին հատուկ ուշադրություն էր դարձնում վիմագրերում հանդիպող անվանաբանական երևույթներին, գտնելով, որ օտար, նույնունամական, մեծ մասամբ արարական անուններ էին ծառում ունենալ առաջին հերթին հայ ազնավական դասի ներկայացուցիչները: Սենք այս խորհրդներին հատուկ կանդրադառնանք ստորև: «Անձնանուններն ու ազգանունները (տոհմանունները) վիմական բնագրերում» ենթարածնում:

«Դայերեն արձանագրագիտության բնագավառում Անիի դպրոցի և հատկապես Յ. Օրբելու վաստակը ոչ միայն նրա հավաքած և իրատարակած արձանագրություններն են,— գրում է ականավոր վիմագրագետ Ս. Գ. Բարխուտյանը:— այլև գերազանցապես այն, որ նա մշակեց և հիմք դրեց գիտական նոր մոտեցման դեպի այդ սկզբնադրյուրները և ապա մշակեց նրանց հավաքման և իրատարակման համար ժամանակակից գիտության բարձր պահանջների ոգով սկզբունքներ և մեթոդներ, որոնք ուղեցույցներ դարձան հետագա ուսումնասիրողների համար»:<sup>95</sup> Յ. Օրբելին առաջինը հայագիտության ասպարեզում մշակեց հայկական փակագրերի առանձին տառանուշներ, որոնցից 500–ը ներկայացրեց տպագրության «Հրիստիանский Восток» հանդեսին:

Յ. Օրբելին շնորհակալությամբ է խոսում իր ուսուցիչ Ն. Մատի մասին՝ հժմեստաբար նրան վերագրելով վերջանության գիտական մեթոդ ստեղծելու նախապատվությունը: «Նոր նյութեր հայկական վիմագրության» ծավալուն հոդվածում Ն. Մատի քանից առաջարկում էր համախմբել Անդրկովկասի մասնագետների ուժերը գիտական ժողովածուներ հրատարակելու նպատակով, սակայն, ինչպես վերը նշեցինք, այդ կարևոր գործը մնաց խանձարութում:

Յ. Օրբելու ուսումնասիրությունների շրջանում հայագիտությանը հայտնի էին ընդամենը 1500 արձանագրություններ, որոնք նա ցանկանում էր իրատարակել «Corpus inscriptionum armenicarum»—«Դիվան հայ վիմագրության» խորագրով: Վերնագրի կաղապարը, ըստ երևույթին, նա վերցրել էր Բելլինի համալսարանի պրոֆեսոր Թեոդոր Մոնգենի «Corpus inscriptionum latinorum» բազմահատոր ժողովածուից:<sup>96</sup>

Յ. Օրբելին կտրականապես բողոքում էր այն երևույթի դեմ, եթե պատմական հուշարձանները վերանորոգելիս ծեփի տակ սկաղկում են հին գրությունները: Նա

իսկան գայրացել էր, որ 1912 թ. Օշականում Գրերի գյուտի տոնակատարության նախընթաց օրերին ծեփով սպաղել և ծածկել էին հին արձանագրությունները:<sup>97</sup>

Դ. Օրբելին ստեղծեց նաև հինգ տարբերանշամներ (գծիկ, կախման կետեր (կամ՝ բազմակետեր), կիսականագծեր, մեծ փակագիծ, տողատման նշան), առանց որոնց չի կարելի ներկայացնել գիտական հրապարակումները:


Նկատի ունենալով մեր «քարակերտ մատյանների» հույժ կարտորությունը Շայաստանի և հարակից երկրների ժողովուրդների անցյալի պատմության համար՝ Շայաստանի գիտությունների ակադեմիայի նախագահությունը քանից անդրադարձել է վիճագրագիտության զարգացման և արշավախմբերի կազմակերպման խնդիրներին՝ առանձնապես կարևորվում է 1986 թ. նոյեմբերի 14-ի որոշումը<sup>98</sup>, որի տակ ուրախությամբ կստորագրեր երջանկահիշատակ Շ. Օրբելին:

Շ. Օրբելու և Ն. Մարի կարծիքով ծեռագիր մատյանների հետ միասին հայկական վիճագրերը կազմում են հայ ժողովորի պատմական անցյալի հիմքերի հիմքը: Զննել մեր մագաղաթյա և քարակերտ մատյանները՝ նշանակում է առհավետ կորցնել ոչ միայն անցյալի պատմությունը, այլև հայ ժողովորի ինքնության արհավատյան:

Շ. Օրբելին շտապում էր, շտապում էր ավելի, քան մենք այսօր. վիճական բնագրերը մեծ մասամբ գտնվում են բաց երկնքի տակ, մշտապես ենթակա արևի, անձրկի, ծյան, սառնամանիքների, քամու ներգործությանը. անգիտակից անձինք անխնայաբար ոչնչացնում են դրանք, ժամանակի ընթացքում եղջվում և քայլավում են բնագրերը՝ դառնալով անընթեռնելի:

Այս կապակցությամբ Շ. Օրբելին գրում էր.

«Չխոսելով արդեն այն գանձերի մասին, որոնք ծածկված են հին շենքերի ավերակների կամ բերած ավազների տակ, կարելի է պատկերացնել, թե որքան նյութ ենք հայտնաբերելու դեռևս, եթե նույնիսկ պեղումներով չզբաղվենք, այլ միայն հակաքենք այն, ինչ գտնվում է հողի մակերեսին, և այդ գործում պետք է շտապել»:<sup>99</sup>




Գարեգին Չովսեփյան

### 3. ԳԱՐԵԳԻՆ ՉՈՎՍԵՓՅԱՆ (1867–1952)

Հայ խոշոր արվեստաբան, վիճագրագետ-պատմաբան, փիլիսոփայության դրվագ Գարեգին Կարապետի Չովսեփյանը (Գարեգին Ա Կարողիկոս Մեծի տանն Կիլիկիո) ծնվել է 1867 թ. դեկտեմբերի 17-ին Լեռնային Ղարաբաղի Մարտակերտի շրջանի Մաղավուզ գյուղում: 1890 թ. ավարտել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանը, ապա ուսումը շարունակել է Բեղլի-

քի, Յալլեի և Լայպցիգի համալսարաններում (1892–1896 թթ.): 1897-ից դասավանդել է Գևորգյան ճեմարանում, լինելով նաև մատենադարանապետ: 1898 թ. ծեռնադրվել է վարդապետ և նշանակվել Գևորգյան ճեմարանի տեսուչ և «Արարատ» ամսագրի խմբագիր: Ալ. Թամանյանի, Աշխ. Քալանթարի և ուրիշների հետ միասին մասնակցել է Շայաստանի պատմական հուշարձանների պահպանման կոմիտեի ստեղծման աշխատանքներին: 1925 թ. Գարեգին արքեպիսկոպոս Յովսեփյանը նշանակվել է Ղրիմի և Նոր Խախիթևանի թեմական առաջնորդ: Կրոնավորի սև սրբամի տակ քարախում էր հայրենանքներ գիտնականի սիրտը: Երկրորդ աշխարհամարտի ժամանակ նա եռանդուն մասնակցություն ունեցավ «Սասունցի Դավիթ» տանկային շարասյան համար նյութական միջոցներ հայրայթելուն:

Գ. Չովսեփյանն ունեցել է բազմաբեղուն գրիչ. ուսումնասիրություններ է գրել հայոց պատմության տարբեր հիմնահարցերի շուրջ: Անգնահատելի արժեք են ներկայացնում «Քարտեզ հայ հնագրության» («Շողակաթ», Էջմիածն, 1913) աշխատությունը, ուր տրված է 5–15–րդ դարերի հայկական տառանշանների անցման փուլերի իրական պատկերը, ապա՝ «Խաբակյանք կամ Պոռշյանք հայոց պատմության մեջ» եռահատոր ուսումնասիրությունը (1928–1943, 2–րդ հրատ. 1969 թ.), որի 3–րդ հատորն ամբողջապես նվիրված է հայկական վիճագրերի վերջանությանը ու մեկնաբանությանը: Դանձնն Գ. Չովսեփյանի հայ վիճագրագիտությունն ունի իր խոշոր մասնագետին. Անիի, Գառնիի, Արագածի պեղումներին մասնակցելը առավել անրապնդեց հնագետ-պատմաբանի նրա վարկանիշը: Գ. Չովսեփյանը բազմաթիվ վիճագրեր է հայտնաբերել Վայոց ձորից, Կոտայքից և այլ վայրերից: Նրա վերջանություններն անթերի են, ստուգ և նույնական:



Աշխարհեկ Քալանթար

### 4. ԱՇԽԱՐՀԵԿ ՔԱԼԱՆԹԱՐ (1884–1942)

Տառապանքով անցել ու ողբերգությամբ է ավարտվել նվիրյալ հայագետ Աշխարհեկ Աղալոյի Քալանթարի կյանքը: Ծնվել է 1884 թ. գետրվարի 11-ին Գուգարաց աշխարհի Արդվի գյուղում (այժմյան Լոռու մարզի Թումանյանի շրջան): 1903 թ. ավարտել է Թիֆլիսի Ներսիսյան, ապա՝ 1906 թ. տեղի Ն. 3 արական գիմնազիան: 1907–1911 թթ. սովորել և ավարտել է Պետերբուրգի կայսերական համալսարանի արևելյան լեզուների ֆակուլտետի հայ-վրա-

## 5. ՍԵՐԱԿ ԲԱՐԻՆՈՒԴԱՐՅԱՆ (1898-1970)



Սերակ Բարինուդարյան

Ավանավոր վիմագրագետ Սեղրակ Գևորգի Բարինուդարյանը ծնվել է 1898 թ. մարտի 21-ին Երանի Սալմաստ գավառի Նավբաշ գյուղում: Տեղափոխվելով Երևան՝ սովորել և 1928 թ. պարտել է պետական համալսարանի պատմագրական ֆակուլտետը: 1932-1937 թթ. ղեկավարել է հնագիտություն, հայոց պատմություն և Հին Արևելքի պատմություն: Պրոֆեսոր (1929 թվից) Ա. Քալանթարը հանդիսանում է Հայաստանի հուշարձանների պահպանման կրմիտեի հիմնադիրներից մեջը (1923 թ. գիտնական քարտուղարը):

Ա. Քալանթարի տպագիր աշխատանքներից մեզ են հասել «Քարե դարը Հայաստանում» (1925 թ.), «Հին Վաղարշապատի պեղունները» (1935 թ.) և բազմաթիվ հոդվածներ՝ հատկապես սեպագրերի մասին:<sup>100</sup> Նա հատուկ նշում է Հին Արմավիրի շրջակայքում հայտնաբերված հունարեն արձանագրության կարևորությունը հայագիտության համար:<sup>101</sup> Վիմական արձանագրությունները, գրում է նա, «մեր պատմության ամենահիմնական աղբյուրն են»:<sup>102</sup> Ս. Մարի և այլոց աշխատանքներով պարզվել է, շարունակում է նա, «որ հնագույն կուլտուրայի ստեղծողները, Հայաստանի նախարանակները, ունեցել են նաև գիր, գրականություն (ընդգծում Ա. Քալանթարինն է-Գ. Գ.), հայտնագրության և արդեն իսկ հավաքված մի քանի հարյուր առանձին արձանագրությունների բնագրեր, փորագրված ժայռերի վրա հիերոգլիֆ և գծային գրերով»:<sup>103</sup> Փարիզի «Revue archéologique» համեստում 1929 թ. լույս է տեսնում Ա. Քալանթարի հայկական արձանագրությունների մասին հոդվածը:<sup>104</sup> Ուսումնասիրողը խոսում է «հայ վիմական արձանագրությունների կորպուսի կազմման» անհրաժեշտության մասին:<sup>105</sup>

Դ. Օրբելին հիշում է, թե ինչպես Անի Ս. Գրիգոր (Գագկաշեն) եկեղեցու շուրջ պեղունների ժամանակ հայտնաբերված 131 թեկորանց արձանագրությունը հմտորեն կարողացավ վերականգնել միայն Ա. Քալանթարը:<sup>106</sup> Պատահական չէ, որ Ն. Մարը Ա. Քալանթարին հաճարել է «Կովկասում միակը, որի վրա կարելի է հենվել, եթե խոսքը վերաբերում է հայկական վիմագիր հուշարձաններին»:<sup>107</sup> Ալլադ. Բ.Ն. Առաքելյանը՝ ժամանակակից հայ վիմագրագետների մեջանուն հովանավորն ու աջակիցը, ըստ արժանվույն գնահատում է Ա. Քալանթարի գիտական վաստակը:<sup>108</sup> Վերջերս վիմագրագետներ Յ. Մելքոնյանն ու Գ. Սարգսյանը անգերենով հրատարակեցին Ա. Քալանթարի տարիներ առաջ կազմած ծեռագիր աշխատությունը՝ Վանստանի արձանագրությունների ժողովածությունը:<sup>109</sup>

Ավանավոր վիմագրագետ Սեղրակ Գևորգի Բարինուդարյանը ծնվել է 1898 թ. մարտի 21-ին Երանի Սալմաստ գավառի Նավբաշ գյուղում: Տեղափոխվելով Երևան՝ սովորել և 1928 թ. պարտել է պետական համալսարանի պատմագրական ֆակուլտետը: 1932-1937 թթ. ղեկավարել է հնագիտական մի շարք արշավախմբեր: Այնուհետև՝ մեղադրվելով ազգայնականության մեջ, 17 տարի անց է կացրել կալանավայրերում: Մինչ այդ, նա հասցրել էր լույս ընծայել «Վելիքուսի Երկիրը» աշխատությունը (1935 թ.), որն իր ժամանակի ուրարտագիտության ակնառու ուսումնասիրություններից էր:

Ս. Բարինուդարյանի գիտական ժառանգության մեջ առանձնակի տեղ է գրադարձում «Հայ միջնադարյան ճարտարապետներ և քարոզործ վարպետներ» մենագրությունը, որը շարադրվեց իրուս թեկնածուական թեզ և տպագրվեց 1963 թվականին: Այստեղ Ս. Բարինուդարյանը ի հայտ է բերել մինչ այդ անժամոք 70 ճարտարապետների (մինչև 17-րդ դարը ներառյալ), 130 քանդակագրողող վարպետների և 49 վիմագիր գրիչների անուններ՝ նշելով նրանց կատարած դեր հայոց ճարտարապետության և արվեստի պատմության մեջ: Սակայն տքնածան ուսումնասիրողին առավել հարազատ էր հայկական վիմագրագիտության ասպարեզը, որին և Նվիրվեց մինչև իր կյանքի մայրամուտը:

Ս. Բարինուդարյանի կարծիքով՝ մինչև 1960-ական թվականները իրատարկաված ժողովածուները corpus-ներ չի կարելի անվանել, քանզի՝

1. Նախորդ Վերածնողները չեն եղել նաև անազետներ.
2. Վիմագրերը համարելով կարևոր և ոչ կարևոր՝ ընդօրինակել են միայն դյուրընթեռնելի բնագրերը.

3. Չեն պահպանել արձանագրությունների հնագրական, ուղղագրական-քերականական առանձնահատկությունները, կատարել են անհարկի ուղղումներ և սրբագրումներ.

4. Չեն օգտագործել տեխնիկական միջոցներ, բացակայում են լուսանկարները, գրչագրերը և էստամպային կրկնօրինակումները:

Ս. Բարինուդարյանն առաջարկում էր վիմագրական ժողովածուներ կազմելիս օգտվել գրուող վանքերում և Մատենադարանում պահպանվող «Քուլիկ»-մատայաններից, որոնցում կան նախկինում ընդօրինակված բազմաթիվ արձանագրություններ, որոնք այժմ գոյություն չունեն կամ մեզ են հասել քայլված ու եղծված վիճակում: Ընթերցելիս պետք է առաջնորդվել բնագրի և

Վերծանության նույնականության սկզբունքով: Այս ամենի մասին Ս. Բարխուդարյանը շարադրում է «Դիվանի» 1-ին պրակում զետեղված «Յայկական վիմագրություն» խորագիրը կրող առաջարանում:

Մեծ վիմագրագետի երազանքը կատարվեց մասնակիորեն. նրա կենդանության օրոք տպագրվեցին Սյունիքի Զանգեզուրյան հատվածի (ի բաց առյալ Մելրու շրջանը), Կայոց ծորի և նասամբ Գեղարքունիքի պրակները, իսկ Արցախի ժողովածուն վիմագրության բաժնի աշխատակիցների ջանքերով և ակադ. Բ. Ն. Ալաքելյանի խմբագրությանը լույս տեսավ Ս. Բարխուդարյանի մահվանից 12 տարի հետո՝ 1982 թվականին: Այժմ տպագրության են պատրաստվում Յուսիսային Յայաստանի և Շիրակի թերակատար ժողովածուները, որոնք իրեն կարենու պատմական սկզբաղյուրներ հաճալրելու են «Դիվան հայ վիմագրության» մատենաշարը:

«Արծանագրությունների հավաքման աշխատանքները,— գրում էր Ս. Բարխուդարյանը.— կապված են Երկարատև և ժամը Զամփորդությունների ու նյութական միջոցների հետ»,<sup>110</sup> որոնցից այսօր, ցավոք, մենք գրկած ենք: Իսկ բաց երկնքի տակ եղած անգնահատելի սկզբնաղյուրները՝ վիմական արձանագրությունները, օրավոր եղծվում ու ոչնչանում են մեր աշքի առաջ, մեր աչքի հեռու:



Կարող Դաֆադարյան

## 6. ԿԱՐՈՂ ԴԱՖԱԴԱՐՅԱՆ (1907-1976)

Բազմավաստակ վիմագրագետ, հնագետ-պատմաբան Կարող Գրիգորի Դաֆադարյանը ծնվել է 1907 թ. ապրիլի 20-ին Ախալցիկն քաղաքում: 1931 թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի պատմագրական ֆակուլտետի պատմության բաժնը: 40-ը չորրորդ ապագա պրոֆեսորը՝ «Յայկական գրի սկզբնական տեսակները» ծեռագիր աշխատության համար արժանանում է Մելքոնյան մրցանակի:

Կ. Դաֆադարյանը շուրջ 25 տարի եղել է Յայաստանի պատմության պետական բանգարանի տնօրենը: 1959 թ. մինչև իր կյանքի ավարտը նա դեկավարել է ՀՀ ԳԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Միջին դարերի հնագիտության բաժնը: 1961 թ. պրոֆ. Կ. Դաֆադարյանին շնորհվել է գիտության վաստակավոր գործիչ կոչում: Ականավոր գիտնականը վախճանվեց 1976 թ. հոկտեմբերի 21-ին, 69 տարեկան հասակում, բարի հիշատակ թողնելով իր բազմաթիվ ուսանողների և հետևողիների մեջ:

Պրոֆ. Կ. Դաֆադարյանի գիտական ժառանգության ցանկում առանձնակի տեղ են գրադարձնում վիմագրագիտական աշխատությունները՝ «Յովիաննատեղ և նրա արձանագրությունները» (1948 թ.), «Սանահնի վանքը և նրա արձանագրությունները» (1957 թ.), «Յաղբատ» (1963 թ.), «Երևան. Միջնադարյան հուշարձանները» (1975 թ.), որոնք թեև շարադրված են «Դիվանից» տարբեր սկզբունքներով (ուսումնասիրվող համալիրների շինարարության տարբեր սկզբունքներով, կառույցների չափագրություններ, տարընթերցումների համեմայատություն, և այլն), սակայն ընթերցողը հստակ պատկերացում է կազմում այդ խոշոր հուշարձանախմբերի և ներօրյա հայոց մայրաքաղաքի քարակերտ մատյանների մասին:

Դայ վիմագրագետների սեղանի գիրքն է «Յայկական գրի սկզբնական տեսակները» (1939 թ.) փոքրածավալ մենագրությունը, որտեղ հեղինակը համեմաստական վերլուծության եղանակով ներկայացնում է Մեսրոպյան այրութենի անխտիր բոլոր տառերի փոփոխությունները սկզբից մինչև ուշ միջնադար:<sup>111</sup>

\* \* \*

Յայկական վիմագրերի ուսումնասիրնան ասպարեզում ակնառու վաստակումի բանասեր-վիմագրագետ Սուլեյն Ավագյանը, (1918-1983), որի աշխատություններն<sup>112</sup> առանձնանում են պատմա-բանասիրական վերլուծությունների բազմաթիվ ճշգրտումներ և սրբագրումներ կատարել նախորդ հրատավագյանը բազմաթիվ ճշգրտումներ և սրբագրումներ կատարել նախորդ հրատավական մակարդակով: Դեռևսելով բնագրի նույնականության սկզբունքին Ս. Արարծը մակարդակով:

Յայաստանի վրացերեն և կրաստանի հայերեն վիմական արձանագրությունները վաղուց ի վեր գրավել են կովկասագետների սևեռում ուշադրությունը: Այդ արժեքավոր հուշարձանները հանգանանորեն ուսումնասիրել և աղբյուրագիտական քննության ենթակել Պարույր Սուլեյանը:<sup>113</sup> Նա ջանադրությանը հայտնաբերելով խաթարված ու տեղահանված հայագիր մի արձանագրություն նեկա ավելորդ անգամ ապացուցեց, որ վրաց ճարտարապետության գլուխ-գործոցներից մեկի՝ Զվարիի կառուցող ճարտարապետը եղել է հայագիր թողոսակը:<sup>114</sup>

Վերջին տասնամյակներում հայագիտությունը և, մասնավորապես, վիմագրագիտությունը հայտնվեցին անկման եզրին. ընդհատվեցին կանոնավոր գործող ամենամյա վիմագրական արշավախմբերի աշխատանքները: Սակայն գտնվեցին նվիրյալներ, որոնք պատենտ առիթն օգտագործելով՝ կարողացան մոռա-

ցուրյան չտալ այս կարևոր բնագավառը: Այդ նվիրյալներից է Վիմագրագետ-պատմաբան Սուլթեն Սաղումյանը, որի գիտական հոդվածներն ու առանձին ուսումնասիրությունները («Աշտարակ», Երևան, 1998, «Մարմաշենի փառքը», Էջմիածին, 1998 և այլն) աչքի են ընկնում ինքնատիպ մեկնարանություններով: Առանձնապես կարևորվում են վիմագրերի ժածկագործության և զարդագործության, համառոտագրության և փակագրության վերաբերյալ Ս. Սաղումյանի շահեկան աշխատանքները:

Արդի հայկական վիմագրագիտության մշակներից են Գրիգոր Գրիգորյանը, Արգամ Այվազյանը, Գագիկ Սարգսյանը, Չուսիկ Մելքոնյանը և ուրիշներ, որոնք ծգտում են շարունակել նախորդ երախտավորների հայրենանկեր գործը:



Մի խումբ վիմագրագետներ  
Նկարում՝ աջից ձախ, Պատ. գիտ. թեկն., վիմագրագետ Չուսիկ Մելքոնյանը,  
վիմագրության բաժնի վարիչ, պրոֆեսոր Գրիգոր Գրիգորյանը (գրքի հեղինակը),  
վիմագրության բաժնի ավագ գիտաշխատող պատմ. գիտ. թեկն.  
Գագիկ Սարգսյանը և գրչագրող-նկարիչ Լևոն Ավազյանը

## ՎԻՄԱԳՐԵՐԻ ՀԱՎԱՔՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԽՈՐՃՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՒՄ

1938 թ. օգոստոսի 20-ին Հայաստանի ժողովրդական Կոմիսարների Խորհրդը (ժողովմխորհը) ակադ. Յ.Ա.Օրբելու գեկուցագրի հիման վրա որոշում ընդունեց՝ կազմակերպել վիմագրական արշավախումբ Խորհրդային Հայաստանի տարածքում եղած վիմագրերը հավաքելու և գիտական հիմունքներով հրատարակելու նպատակով: Արշավախումբի կազմում ընդգրկվեցին Յ.Օրբելին հնագետ-պատմաբաններ Աշխարհերեկ Թալանթարը, Սերդակ Բար-ղեկավարը, Կարո Ղաֆարյանը և ուրիշներ, սակայն վերահաս 2-րդ Հանաշխարհային պատերազմը և հայ գիտնականների ծերբակալությունները պատճառ դարձան այս ծրագրի խափանման:



Ակադեմիկոս Բարկեն Առաքելյան

1943 թ. հիմնադրվեց Հայաստանի գիտությունների ակադեմիան, և նրա առաջին նախագահ Յ.Օրբելին չնորացավ անդրադառնալ վիմագրական արշավախմբերի ստեղծման հարցին: 10 տարի անց Գիտությունների ակադեմիայի նախագահությունը դարձյալ ըննարկման նյութ դարձրեց այս խնդիրը, սակայն գործը տեղից շարժվեց միայն 1959 թ., երբ նորաստեղծ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի կազմում ակադ. Բ.Ն.Առաքելյանի ջանքերով հիմնադրվեց հայ վիմագրության բաժին Ս.Գ.Բարխուդարյանի գլխավորությամբ:

Ինստիտուտի գիտական խորհուրդը որոշեց վիմական արձանագրությունները հավաքել վարչա-տարածքային սկզբունքով, ըստ առանձին շրջանների: Ընդորինակված բնագրերը պետք է ունենային լուսանկարներ, գրչագրեր և, ըստ հարկի՝ սեղմ մեկնարանություններ ու ժանոթագրություններ: Այսպիսով ակտեց հրատարակել «Դիվան հայ վիմագրության» մատենաշարը:

Առ այսօր լույս են ընծայվել 8 պրակներ:

1966 թ. երկար փորձություններ անցնելուց հետո տպագրվել և պրակը (II պրակի տպագրությունից 6 տարի հետո): Այն կազմել էր Յ.Օրբելին դեռևս Ամիում կատարած պեղումների ժամանակ: Սակայն հորդացած և սակայն գետի ջրերը լցվել էին Պետական երմիտաժի նկուղահարկերը և անդարձ կորստյան պատճառ դարձել Յ.Օրբելու ծեռքով պատրաստված ծովածոտ տառատեսակների ու

**արտատիպերի:** Բարեբախտաբար, մեկ օրինակ փրկվել էր ոչնչացումից, որը և հիմք ծառայեց «Դիվանի» լ պրակի համար: Պրակում գետեղված են 266 արձանագրություններ Անի մայրաքաղաքից և նրա շրջակայքից: Դ.Օրբելու շնորհիվ փաստից փրկվեցին ճակատագրի բերումով մեզ այսօր անծեռնմխելի դարձած Բագրատունյաց մայրաքաղաքի բազմարովանդակ վիմագրությունները:

Պրակն ընթերցողը նկատում է, թե ինչպիսի բարեխողությամբ, գիտնականին վայել պատասխանատվությամբ և գերագույն համբերությամբ է խոշոր արևելագետ հավաքել, համադրել և վերականգնել վաղուց ի վեր եղծված, քայլայված պակասավոր վիմագրերը:



Ամիի հնագիտական արշավախմբի անդամ, արվեստագետ-լուսանկարիչ  
Արամ Վրույր

Դ.Օրբելին Ն.Մասի հետ միասին հայ վիմագրագիտությունը բարձրացրեց հանաշխարհային գիտության մակարդակի:

**II պրակը,** որում գետեղված են 421 արձանագրություններ պատմական Սյունիքի Ծղուկ, Հարանի, Բաղր, Կովսական և Աղահեծք գավառներից կամ արդի Սյունիքի մարզի Գորիսի, Միսիանի, Կապանի շրջաններից և մասսամբ Քաշարադի (Նախշին Լաշին) տարածքից՝ Ս.Բարիսուղարյանի աշխատասիրությամբ լույս ընծայվեց 1960 թ.:

**III պրակը** ընդգրկում է 813 արձանագրություններ պատմական Սյունիքի Վայոց ծոր գավառից (այժմյան Վայոց ծորի մարզի Եղեգնաձոր և Վայը Ենթաշրջանները): Այն լույս ընծայվեց 1967 թ. Ս.Բարիսուղարյանի աշխատասիրությամբ:

**IV պրակը** տպագրվեց Ս.Բարիսուղարյանի մահվանից հետո՝ 1973 թ., նրա աշակերտների ջանքերով: Այստեղ ամփոփված են 1547 արձանագրություններ պատմական Սյունիքի Գեղարքունիք և Սողոք գավառների տարածքներից (այժմյան Գեղարքունիքի մարզ):

**V պրակը** երկար ծգծգումներից հետո տպագրվեց 1982 թ.: VI պրակից հետո: Այստեղ գետեղված են 1071 արձանագրություններ պատմական Դայաստանի Արցախ նահանգից, Գանձակից և նրա հարակից շրջաններից: Արշավախմբի ընդհանուր դեկավարը Ս. Բարիսուղարյանն էր: Դավաքչական աշխատանքներին մասնակցել են նաև աղրբեջանական մասնագետները Սեշենի Խանում Նեյմատովայի գլխավորությամբ: Սակայն հայ-աղրբեջանական վիմագրական միացյալ արշավախմբի աշխատանքները ծախողվեցին աղրբեջանական գիտականների հրաժարվելու պատճառով, քանզի օրակարգում դրված էր Նախշևանի տարածքի համատեղ ուսումնասիրության խնդիրը:

**VI պրակը** Ս. Ավագյանի և Դո. Զանփոլայյանի աշխատասիրությամբ ընթերցողի սեղանին դրվեց 1977 թ.: Այստեղ ամփոփված են Աղստևի հովտի (այժմյան Տավուշի մարզի Իջևանի շրջան) թվով 355 վիմագրեր:

**VII պրակն** ընդգրկում է Ուկրաինայի և Սոլդովայի հայկական գաղթօջախների 776 վիմական և թանգարանային առարկաների արձանագրություններ (կազմող՝ Գր.Ս.Գրիգորյան): Այն տպագրվեց 1996 թ. Խաժակ արք. Պարսամյանի և «Զգոն եպ. Տեր-Դակոբյան» հիմնադրամի հովանավորությամբ:

**VIII պրակը** Գր. Գրիգորյանի աշխատասիրությամբ լույս տեսավ 1999 թ. Շահն արք. Ամեմյանի նախաձեռնությամբ և Մեսրոպ արք. Աշճյանի նյութական աջակցությամբ: Այստեղ գետեղված են Ուսուսատանի Դաշնության հայ գաղթավայրերի 815 արձանագրություններ, ընդ որում նաև թանգարանային իրերի մակարություններ:

1997 թ. տպագրվեց Կուրիք ծախսափնյա շրջանների (Բուն Աղվանք) հայկական արձանագրությունների ժողովածուն (կազմող՝ Ս.Կարապետյան): Այստեղ

ամփոփված են ավելի քան 500 արձանագրություններ, որոնց պատմագիտական արժեքը առավել կարևորվում է այսօր, երբ հայաթափել են երթեմնի ծաղկուն և բարգավաճ այդ շրջանները: 1999 թ. լուս տեսավ նույն հեղինակի «Դայ մշակույթի յուշարձանները Խորհրդային Ադրբեյջանին բռնակցուած շրջաններում» մենագրությունը, որը նշանակալից ներդրում է հայագիտության ասպարեզում:

1981 թ. Միլանում հրատարակվեց Գաբրիելա Ուլուհոնյանի իտալերեն աշխատությունը,<sup>115</sup> ուր ամփոփված էին Զուղայի Ս.Ստեփանոս վանքի և Դարշամբի 192 արձանագրություններ՝ անհրաժեշտ լուսանկարներով, հակիրծ մեկնարանություններով ու ծանոթագրություններով:<sup>116</sup> Աշխատությունը կազմված է «Դիվանի» սկզբունքով, սակայն բացակայում են գրչանկարները: Գ.Ուլուհոնյանի վերծանությունները կատարված են անհրաժեշտ գիտական մակարդակով, որպիսի փաստը մատնանշում է հեղինակի մասնագիտական կարողության և սկզբնաղյուրների իմացության մասին:

Որքան մեզ հայտնի է, առաջին անգամ Գ.Ուլուհոնյանի հրատարակած արձանագրություններում է վկայված «Երշատակ և քառ» կաղապարային բանաձևում,<sup>117</sup> որը կրկնվում է կառույցի երեսպատման մի քանի քարերի վրա: Այդ նշանակում է տվյալ համայնքի յուրաքանչյուր ընտանիք (գերդաստան) իր մասնակցություն է ունեցել հրանոր կառույցի շինարարությանը. ոմանք կիր ու ավագ են բերել,<sup>118</sup> ոմանք՝ շինաքար: Գորիսի շրջանի Դարժիս գյուղի բնակչյանները մեզ պատմեցին, որ իհն գյուղի եկեղեցին սալարկվել է առանձին ընտանիքների ջանքերով – ամեն մի տուն պատրաստել է տվել մեկ սալաքար:

Գաբրիելա Ուլուհոնյանի սույն աշխատությունը հայ վիմագրագիտության մնայուն արժեքներից է:

## ՎԻՄԱԳՐԵՐԻ ՎԵՐԾԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐԸ

Վիմական բնագրերի հավաստիության և նույնականության վկացունքից ելնելով, առաջարկվում է վերծանելիս կիրառել հետևյալ պայմանական նշանները:

— գծիկ նշանակել ջարդված տառերի փոխարեն, յուրաքանչյուր տառի համար մեկ գծիկ (երեք տառից ոչ ավելի): Օրինակ՝ Դ–յա–ան (Դայաստան), Դամար մեկ գծիկ:

..., ..., բազմակետ կամ կախման կետեր նշանակել եղծված, անընթեռնելի սամ ջարդված տառերի փոխարեն, անկախ նրանց քանակից (կարող են լինել սամ ջարդված տառերի փոխարեն, անկախ նրանց քանակից): Օրինակ՝ Ի թԱ...ԳԱԳ.. ամբողջական բառեր կամ նախադասություններ): Օրինակ՝ Ի թԱ...ԳԱԳ.. ԱՐՔ...ՅԱ... ԿԱՏ... ՏԱ...

Լ կիսափակագծերով (հորիզոնական ստեղները ներքևում) նշանակում ենք հնարավոր վերականգնությունը վերծանության մեջ: Օրինակ՝ Վերը թերված հնարավոր վերականգնությունը կարելի է վերականգնել՝ Ի ԹՎԱՐՈՒՐՈՒԹԵԱՆ, պակասավոր նախադասությունը կարելի է վերականգնել՝ Ի ԹՎԱՐՈՒՐՈՒԹԵԱՆ:

Ղ կիսափակագծեր (հորիզոնական ստեղները վերևում), կիրառում ենք այն ժամանակ, երբ վերականգնում ենք փորագիրի բաց թողած տառերը կամ ամանակագծերը (—) սղումները վերծանության մեջ: Օրինակ՝ ՔՍ ԱԾ Վերականգնում ենք ՔՐԻՍՏՈՂ ԱՄՍՈՒԱԾ, ԴՅԱ ԴՅԱ ՅՐՈՂ:

[ ] մեծ փակագծով (երկու ներքեւի և վերկի հորիզոնական ստեղները հանդիպակաց) նշում ենք բնագրի մեջ եղած ավելորդ տառերը (վերծանության ժամանակ): Օրինակ՝ ԳՐԵՎԱՐՈՒ ԵՄ[Փ], ՆԱՒՍՍԱՎԱՐՈՒ, ՏԻԳՐԱՎԱՐՈՒ և այլն:

/ Տողատման (բառանջատնան) ոլղահայաց գծիկ նշանակում ենք բնագրի տողերի սահմանները (վերծանության մեջ):

Դա արվում է տեղ խնայելու նպատակով, քանի որ կորողային հուշարձանների և խաչքարերի վրա վերից վար երթեմն գրվում է մեկական տառ, իսկ յուրաքանչյուր տառ մեկ տող է:


Օրինակ՝ փոխանակ գրելու.

Ա  
Յ  
Ս  
Ե  
Կ  
Ա  
Ն  
Գ  
Ւ  
Ս  
Գ  
Ա  
Ր  
Ք  
Ա  
Յ  
Յ  
Յ  
Ա  
Ր  
Ք  
Ա  
Յ  
Յ  
Ի

23 տողի փոխարեն՝ տողատման գծիկի կիրառմամբ այս նախադասությունը վերջանության մեջ գրում ենք մեկ տողով.

Ա/Յ/Ս/ է /Շ/Ա/Ս/Գ/Ի/Ս/ /Գ/Ա/Գ/Վ/Յ/Յ/Ի: Կան տողեր, որոնք ունեն երկուական կամ երեքական-չորսական տառեր: Նման դեպքերում նույնպես կիրառվում է տողատման նշանը:<sup>119</sup> Վահանավանքի կրկնահարկ դամբարան-եկեղեցու 1086 թ. արձանագրության մեջ թյուրինացար կարդացվել է Կավասն երեսնունը, որը նույնությամբ արտացոլվել է Տր.Աճառյանի «Անձնանուների բառարանում»: Իրականում այստեղ նշերցվում է «...Աշոտիկա վասն...» այսինքն՝ կատարվել է սխալ բառանջատում: Դիշեցնենք, որ այս սկզբունքը ընդունվում է միայն վերջանության ժամանակ, բնագիրն ընդորինակելիս:

Բազմաթիվ վիմագրեր մեզ են հասել առանձին բնեկորների տեսքով:<sup>120</sup> Բնագրի ամբողջական պատկերը վերականգնելու համար նախապես պետք է որոշել, թե որ բնեկորը հուշարձանի որ մասից է հայտնաբերվել: Զի կարելի բոլոր բնեկորները կուտակել մի տեղում, այլապես կստեղծվի խառնաշիփը: Նման դեպք-



Բնեկորներով վերականգնված  
բնագիր (XII. դ.)

րում պետք է ղեկավարվել հետևյալ սկզբունքով.

- Վիմագրված բնեկորներն առանձնացնել ըստ քարատեսակների, նկատի ունենալով քարի նաև գունաբափակած լինելու պարագան:

- Առանձնացնել նույն տառատեսակներով փորագրված բնեկորները, հաշվի առնելով տառերի քացվածքը, ստեղների փորվածքի խորությունը, ուղղվածությունը, միջուղղային չափերը:

- Վիմագրված բնեկորները շարում ենք կողք-կողքի և փորձում շարահյուսական կապ գտնել նրանց միջև. մտովի կազմում ենք նախադասություն նկատի ունենալով նաև լեզվա-ոճական առանձնահատկությունները:

- Եթե բոլոր վիմագրված բնեկորները չեն հայտնաբերվել, կարելի է տեղում կատարել նախանական բնույթի հետախուզական պեղումներ: Դակառակ պարագայում պետք է օգտագործել տվյալ հուշարձանում եղած այլ վիմագրերի

տվյալներ: Օրինակ՝ Վահանավանքի խաչքարերից մեկի թերի արձանագրությունը հնարավոր եղավ վերականգնել մեկ այլ արձանագրության միջոցով: Շահանդուխտ թագուհու խաչքարի վրա փորագրված է. «ԹՎ. :ՇԼ: (1081): Ողորմեա ՔՄ ԱՌ ի քո ի միւս անգամ գալստեան... Շահանդխտո, Սենեթերիմա եւ Կատային»: Արձանագրության միջնամասը պակասող բառեր ունի: Տարիներ հետո պեղումներով հայտնաբերվեց Սովոր թագուհու տապանագիրը՝ հետևյալ բովանդակությամբ. «Սովիի Աղվանից թագուհի, զոքան Գրիգոր թագաւորի, որդոյ Աշոտկայ, մայր Շահանդխտո. թվ. :ՇԼ: (1081)»: Այսպիսով՝ հնարավոր եղավ վերականգնել Շահանդուխտի խաչքարի արձանագրությունը. «Ողորմեա ՔՄ ԱՌ ի քո ի միւս անգամ գալստեանդ Լքագուհեայ Սովիեայ մարլ Շահանդխտո, Սենեթերիմա եւ Կատային. թվ. :ՇԼ: (1081)»:

Գործնականում դյուրությամբ են վերականգնվում բնագիր բանաձևային հատվածները:



Արծանագրությունների բեկորներ Ամիի պեղումներից

## ՎԵՐԾԱՆՈՒԹՅԱՆ ԱՆՇՐԱԺԵՇՏ ՊԱՐԱՆՁՆԵՐԸ

Վիմական արծանագրություններն ընդօրինակելիս անհրաժեշտ է դեկավարվել հետևյալ պահանջներով.

1. Դաշտային օրագրում պարտադիր նշել ուսումնասիրվող հուշարձանների տեսակը (Եկեղեցի, ամրոց, խաչքար, տապանաքար և այլն), նրանց տեղադրությունը, վիմագրերի պահպանվածության վիճակը, չափերը (եթե հնարավոր է, գրչության ձևերը (տառատեսակը):

2. Կատարել ստույգ, նույնական արտագրություն՝ բնագրի գրչագրական առանձնահատկությունների պահպանմամբ:

3. Ընդօրինակել անխտիր մեծ և փոքր արծանագրություններն ու նրանց բեկորները (օրինակ՝ շինարարական մեկ բեկորի միջոցով որոշվեց Հերմոնի դարեւկանքի ստույգ տեղադրությունը):<sup>121</sup>

4. Բնագրի վերականգնումների ժամանակ անհրաժեշտաբար կիրառել բոլոր պայմանական նշանները (գծիկ, կախման կետեր, կիսափակագծեր, մեծ փակագիծ և տողատման նշան):

5. Աշխատությունը տպագրության նախապատրաստելիս պարտադիր նշել վիմական բնագրերի մատենագիտությունը, հրատարակված կամ չհրատարակված լինելու պարագան, կամ ուժ կողմից, երբ և որտեղ է հրատարակված:

## ՅԱՄԱՊՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆ

(Յապավմամբ գրվող բառերը)

Զեռագիր մատյաններում և վիմական արձանագրություններում մի շարք բառեր կիրապուր են առավելապես հապավված ծևով:<sup>122</sup> Յապավումը պահպանվում է նաև բառաթերման կամ բառաբարդեցման ժամանակ:<sup>123</sup> Յապավված բարի վրա դրվում է հատուկ պայմանական նշան՝ հորիզոնական գծիկ, (—, —), որը կոչվում է պատիկ, հապավման նշան, դուր կամ քաշ: Յապավմամբ առավել հանդես են գալիս տերունական յոթ բառերը. ԱՌ, ՏՐ, ՑՍ, ՔՍ, ՄԲ, ԵՂՄ, ԲՀԴ

ԱՌ – Աստուած (ուղղական հոլ.)

ՏՐ – Աստուծոյ (սեռական հոլ.)

ՑԱՑ – յԱստուծոյ (բացառական հոլ.)

ԱՎ – Աստուծով (գործիական հոլ.)

ՏՐ – Տէր (ուղղական հոլ.)

ՑԵ – Ցեառն (սեռական հոլ.)

ՏԵ – ի Տեառն (բացառական հոլ.)

ՄԲ – Տերամբ (գործիական հոլ.):

ՑՍ – Ցիսու (ուղղական հոլ.)

ՑԲ – Ցիսուի (սեռական հոլ.)

ՑԷ – ի Ցիսուէ (բացառական հոլ.)

ՔՍ – Քրիստոս (ուղղական հոլ.)

ՔԲ – Քրիստոսի (սեռական հոլ.)

ՔԷ – ի Քրիստոսէ (բացառական հոլ.)

Մյուս հոլովածերը վիմագրերում չեն պահպանվել:

Նոյն կերպ են հոլովածում ՄԲ (ՍՈՒՐԲ) ԵՂՄ–Երուսաղեմ, ԲՀԴ–Իսրայել բառեր:

## ԿՑԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Կցագրություն կամ կապգիր կոչվում է հապավման կամ սղման այն ձևը, երբ տարրեր տառերի անհրաժեշտ ստեղներն իրար ծուլվելով, գործածվում են իրեն ընդհանուր և բառանջատում տեղի չի ունենում, այսինքն՝ կցագրությունն ունի շարունակական բնույթ, հետևաբար չեն կիրառվում տրոհման նշանները: Կցագրված բառերն իրարից անջատում ենք մտովի, տրամաբանորեն: Բազմաթիվ կցագրեր են օգտագործված Ավանի, Օծունի, Եղվարդի, Յոհիվսիմեի, Վահանավանքի և այլ պատմա–մշակութային կենտրոնների վիմական արձանագրություններում: Կցագրերի կիրառության մասին արժեքավոր աշխատություններ են գրել պրոֆ. Կ.Դաֆաղարյանն<sup>124</sup> ու վիմագրագետ–պատմաբան Ս.Սաղումյանը:<sup>125</sup>

Մինչև օրինակներին անցնելը նկատենք, որ երեմն միևնույն տարը նույնությամբ կարող է կրկնվել առանց գրվելու, նաև պահպանության մեջ գրել պրոֆ. Կ.Դաֆաղարյանն<sup>124</sup> ու վիմագրագետ–պատմաբան Ս.Սաղումյանը:

ԱՐՅՈՒԽԱՔ

ԼԱԲ է ԿՈՅՐ ԱՉԱՒՔ ՔԱՍ ԼԿՈՅՐ ՄՏԱՒՔ

ԱՐՅՈՒԽԱՔՆԵՐ

ԱԿՍ ԸՆԴ ԱԿԱՍ ԱՏԱՄ ԸՆԴ ԱՏԱՄԱՆ

Ինչպես տեսնում ենք, առաջին օրինակի Ք տարը գործածվելով մեկ անգամ՝ ընթերցվում է երկու անգամ (ԱՉԱՒՔ–ՔԱՍ բառերի համար): Բառանջատում կատարելիս պետք է զգույշ լինել, այլապես կստանանք խաթարված բնագրի պատկեր:

Կցագրերով են հանդես գալիս բազմաթիվ տառակապակցություններ.

**Ա** –աբ (Աբրահամ)

**Ֆ** –ագ (Ագարակ)

**Մ** –ագր (ճառագրել)

**Ռ** –աթ (Աթանաս)

**Ա** –աի (Արքաի)

**Ա** –ախ (Խարդախ)

**Ա** –ակ (Ագարակ)

**Ա** –աղ (Գամաղիել)

**Ա** –ամ (Ամենայն)

**Ն** –աման (Կանան)

**Ա** –ամբ (Իշխանութեամբ)

**Ա** –ամեն (Ամեն)

**Ա** –ամեն (Ամենայն)

**Ա** –ամս (Ամսական)

**Ա** –ան (Անդունդ)

**Ա** –ան (Անգէտ)

**Ա** –անի (Ղանիել)

**Ա** –անխափան

**Ե** –անք (Խաքկանք)

**Ա** –անն (աններելի)

**Ա** –առ (առաւօտ)

**Ա** –առա (առաքեալ)

**Ա** –աս (Ասատուր)

**Ա** –աս (ասել)

**Ա** –ատ (Սմբատ)

**Ա** –ար (Արա)

**Ա** –ար (արար)

**Ա** –արգ (արգելք)

**Ա** –արդ (արդիւնք)

**Ա** –արի (քաջարի)

**Ա** –աւ (աւրենք)

**Ա** –աւր (աւրինել)

**Ա** –աւր (հաւր)

**Ա** –աւր (Զովասափ)

**Ա** –աք (Առաքեալ)

**Ա** –բա (Բարսեղ)

**Ա** –բարե (բարեկամ)

**Ա** –գա (Գալուստ)

**Ա** –գագ (Գագիկ)

**Գ** –գե (Գեղամ)

**Գ** –գէ (Գէղէնն)

**Վ** –գս (Սարգսի)

**Գ** –գոր (Գրիգոր)

**Գ** –գոր (Գորել)

**Վ** –դա (Դաւիթ)

**Վ** –դե (Դերենն)

**Դ** –դէ (Դէմ)

**Վ** –դաի (Ամդաւի)

**Վ** –դամ (Ամդամ)

**Դ** –դո (Անդորր)

**Ե** –եւ (Եւա)

**Դ** –դի (Ուղի)

**Բ** –թւ (Թւականութեան)

**Թ** –թվ (Թվին)

**Թ** –թվ (Թվին)

**Ժ** –ժամ (Ժամանել)

**Ժ** –ժամի (Ժամին)

**Ի** –իմ (Իամարիմ)

**Ե** –ին (Արարին)

**Ի** –ին (Անձին)

**Ե** –ես (Եսայի)

**Ե** –ես (Նեստոր)

**Ե** –եր (Գրքեր)

**Ե** –եւան (Իջեւանել)

**Զ** –զի (Քանզի)

**Է** –էի (Ստեփանէի)

**Ր** –րա (Քագաւոր)

**Ջ** –ջը (Իշխանութեամբ)

**Շ** –քն (Արքնանալ)

Ե	-ին (Սմբատին)	Յ	-դք (Եղբայր)	Ն	-նե (պատանեակ)	Ռ	-ու (Լեզու)
Ռ	-իս (տաճարիս)	Շ	-դե (Ուելոնդ)	Շ	-մե (հնեւ)	Ռ	-ոխ (ոխակալ)
Ը	-իր (Իրերաց)	Հ	-դի (Դարանադի)	Մ	-մի (քանի)	Շ	-ուն (անտուն)
Ծ	-իսք (զիս բարեխաւս)	Ա	-մա (մասն)	Ջ	-նթ (ընթացք)	Ռ	-ուր (ամենուր)
Ը	-լի (սիրելի)	ՄԱ	-ման (Խանգարման)	Ը	-մն (աննման)	Չ	-չս (խաչս)
Խ	-իա (Զաքարիա)	ՄԲ	-մարե (Մարեամ)	Շ	-նորոգ (նորոգել)	ՊԱ	-պա (պահապան)
ԽԵ	-խա (Խափանել)	ՄԵ	-մե (մերոյ)	Մ	-մի (աւագանի)	ՊԳ	-պագ (Երկրպագել)
ԸՆ	-խան (Խանգարել)	ՄԵՐ	-մեր (մերազմեայ)	Ջ	-նք (միաբանք)	ՊԸ	-պատ (պատասխան)
ԽԵ	-խխ (Խխունջ)	ՄԸ	-մէ (մէջ)	Չ	-յս (յոյս)	ՊԿ	-պաւ (ապաւեն)
ԽՄ	-իմ (իմոյ)	ՄՄ	-մի (միաբան)	Ր	-ոք (Յակոք)	ՊՔ	-պաք (պարսպաքաղաք)
ԽՆ	-տխ (Տխարբ, գյուղ)	ՄՄ	-միա (միասին)	Թ	-ոգ (Ոգորել)	ՊԵ	-պե (պետական)
ԽՖ	-խափ (Խափանել)	ՄՄ	-միր (ամիր)	Ռ	-ոխ (Ոխակալ)	Պ	-պի (Պիտոյից գիրք)
ԿԱ	-կա (Կատարիչք)	ՄՄ	-մխ (Մխիթար)	ՌԽ	-ող (ողբալ)	ՊՂ	-պղ (Պլատոն)
ԿԲ	-կամաւ (Կամաւն)	ՄՄ	-մն (մնացեալ)	ՐԸ	-ողոր (ողորմութիւն)	ՊՆ	-պան (այգեպան)
ԿՄ	-կամ (Կամաւք)	ՄՆ	-նար (անարի)	ՐՄ	-ոնա (Արիսոնոմայ)	ՊԾ	-պո (Պոռշ, իշխան)
ԿԲ	-կամէ (Կամ է ինձ)	ՄԱ	-նակ (Փառնակ)	Ռ	-ոս (Սարտիրոս)	Պ	-պար (Պարոյր, արքա)
ԿՎ	-կան (հայկական)	ՄՆ	-նամ (գոհանամ)	ՌԽ	-ովխ (ով խափանէ)	Ռ	-օա (Ոափայել)
ԿԿ	-կն (ակն)	ՄՆ	-նար (անհնար)	ՐՎ	-ովկ (որովհետև)	Ա	-սա (Սամուել)
ԿՎ	-կս (Ժամանակս)	ՄՆ	-նաւ (նաւասարդ)	Ր	-որ (որդի)	Ռ	-սք (Սոսքենես)
ՀԱ	-հա (Հայոց)			Ց	-որց (որդուց)	Մ	-սի (սիրելի)
				Ֆ	-ոք (եթէ ոք)	Դ	-սն (սնուցիչ)
				Ր	-ու (Սամուել)	Փ	-փա (Փառանձեն)
						Ց	-ցի (Խորենացի)

Ն	-սինէ (Խարիսխն է)
Մ	-սին (Մխտորալեզ)
Ա	-սկ (սկսել)
Ն	-սն (սնուցող)
Ռ	-ռու (Սարտիրոս)
Ը	-մբ (Իշխանութեամբ)
Վ	-վա (Վահան)
Վ	-վր (Վրթանելս)
Վ	-վն (Ժողովն)
Վ	-վար (Վարդապետ)
Ր	-րո (այգույ)
Փ	-փար (Գաղափար)
Ց	-ցո (հարկաց - ռամկաց)

Տ	-տա (Տանձատակի)
Մ	-տար (տարբեր)
Ե	-մն (մեղաւոր)
Է	-տիրա (տիրամայր)
Մ	-մն (մնացորդ)
Ո	-տո (հոտոտել)
Ը	-տս (հոտս)
Վ	-տվ (քառատվել)
Ց	-ցր (ցրուել)
Ք	-քս (միաբանքս)
Ր	-րն (հաւրն)

## ՓԱԿԱԳԻՐ

Փակագիր (Լիգատուր) կոչվում է համառոտագրության այն ձևը, երբ մեկ (սակավ դեպքերում երկու կամ երեք<sup>126</sup>) մայր տարի (տառերի) հիման վրա այլ տառերի անհրաժեշտ ստեղների միակցմամբ կազմվում է ամբողջական բարիմաստ արտահայտող անուն կամ որոշ խմբաքանակի բառակապակցություն: Ի տարբերություն կցագրի, փակագիրը գրվում է առանձին, շարունակական բնագրից մեկուսացված և վերծանելու համար երբեմն ջանքեր են պահանջվում:

Դայկական վիճագրերում փակագիրը հանդես է գալիս 5–6-րդ դարերից, իսկ ձեռագիր մատյաններում 12-րդ դարից:<sup>127</sup> Դնագույն փակագրեր կան Դվինում, Թալինի Շենիկ գյուղում, Ապարանի Յարթավան գյուղում և այլուր:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ վիճագրերում առավել շատ են փակագրված անձնանունները:<sup>128</sup> Փակագրեր կան Անիից բերված գրակաների վրա:<sup>129</sup> Օրինակներ.

Կ	-Արիսօղոմոն	Կ	-Կիրակոս
Ա	-Ալեքսան	Կ	-Կարապետ
Ա	-Արմեն	Հ	-Դամբարձում
Ա	-Աւետիք	Մ	-Մահտեսի
Է	-Աբրահամ	Մ	-Մովսես
Բ	-Առաքել	Մ	-Մկրտիչ
Ա	-Աստուածատուր	Ա	-Աղասի
Գ	-Գալուստ	Ա	-Ասատոր
Ղ	-Ղանիել	Վ	-Ավագ
Ղ	-Ղաւիթ	Գ	-Գարրիել
Ղ	-Ղաչատուր	Գ	-Գեորգ
Ղ	-Ղաչատուր	Ղ	-Գեորգ

ԳՐ	-Գորգ	ՇՀԾ	-Պետրոս
ԱՅ	-Եսայի	ՇՀԾ	-Ռափայէլ
ԵԲՄ	-Երեմիա	ՎՀԾ	-Սիմեօն
ՇՀ	-Թաղէտոս	ՄՓԾ	-Ստելիկան
ՂՀ	-Ղազար	ՀՀԾ	-Կարդապետ
ՆՀ	-Խաչատուր	ՆՀԾ	-Նահապետ
ՄՐԾ	-Մարքար	ՊՀԾ	-Պետրոս
ՄՀԱՄ	-Մինաս	ՄՀԾ	-Սարգիս
ԺՀ	-Միքայէլ	ՎՀԾ	-Սահակ
ԵՀ	-Մատթեոս	ԴՀԾ	-Պողոս
ՉՀ	-Յակոբ	ՄԵԾ	-Սուքիաս
ՉՀԾ	-Յարութիւն	ՏՀԾ	-Ստեփան
ՉՀԾ	-Յօհաննէս	ԳՀԾ	-Փիլիպոս
ՉՀԾ	-Յովանէ		

Նկատելի է, որ մի շարք վիմագրերում հապաված ձևով են հանդես գալիս հատկապես անծնանունները, պատվանուններն ու այլ բառեր: Օրինակ՝ ՔՐ - Դաւիթ,<sup>130</sup> ՔՐ - Գրիգոր,<sup>131</sup> ՄՏ - Ստեփանոս,<sup>132</sup> ՄԻ - Միխար,<sup>133</sup> ՑՈՒ - Յովան,<sup>134</sup> ԵՊ - Եպիսկոպոս, ՑՊ - ճգնահոր,<sup>135</sup> ինչպես նաև՝ ԿՐ - պարուն,<sup>136</sup> ՄՊ - սպիտակ (արծաթ դրամ),<sup>137</sup> ՎՄ - վասն<sup>138</sup> և այլն: Ինչպես տեսնում ենք, անծնանունները և պատվանունները գրվում են առաջին և վերջին տառերով կամ սկզբնատառերով: Սակայն կան այս սկզբունքից շեղումներ: Օրինակ՝ Պետրոս գրվում է ՊՏ,<sup>139</sup> Պողոս՝ ՊՇ:<sup>140</sup> Նկատելի է, որ հիմնականում սղվում են ձայնավորները:

## ՎԻՄԱԿԱՆ ԱՐՉԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼԵԶՈՒՆ

Դայ միջնադարյան վիմագրերը փորագրված են դասական գրաբարով, միջն հայերենով, բարբառախառն գրաբարով և տեղական բարբառներով կամ խոսվածքներով: Ընտիր գրաբարով արձանագրություններ կան Անիի Մայր տաճարի, Տաթևի, Դաղարծնի, Գանձասարի, Գոշավանքի, Կանեվանի, Մարմաշենի, Կահանավանքի և այլ պաշտամունքային օջախների պատերին, թեև սրանցում նույնական նկատելի են բարբառային (տեղական խոսվածքների) ներթափանցումներ: Միջին հայերենի էական առանձնահատկություններից մեկն այն է, որ, իրեն կանոն, սղվում են բառամիջյան որոշ ձայնավորներ: Օրինակ՝ ՍՈՎՈՐԵԼ-ՍՈՎՐԵԼ, ՄՈՏԵՆԱԼ-ՄՈՏԵՆԱԼ, ՄՈՐԱՆԱԼ-ՄՈՐԱՆԱԼ և այլն:

Չեղագիր մատյաններում, ինչպես նաև վիմագրերում տեղ խնայելու և արագագրության նպատակով բազմաթիվ բառեր գրվում են ձայնավոր տառերի սղմանը: Օրինակ՝ ՔՀՆ - քահանայ,<sup>141</sup> ՀՅՅ-Քայոց,<sup>142</sup> ՀԳՅ-Հ-հոգոյն կամ հոգոտյն,<sup>143</sup> ՎՄՏԿ-վաստակաց կամ վաստակոց,<sup>144</sup> ՇՆՅ-շիմեաց,<sup>145</sup> ՑՇՏԿ-իշատակ, ՎԴՐՏ-վարդապետ:<sup>146</sup> Սղումը պահպանվում է նաև հոլովական վերջավորություններում ԻՇԽՆ ԹԻ-իշխանութիւն, ԻՇԽԱՆՈՒ ԹԻ-իշխանութեամբ և այլն:

## ԲԱՐԲԱՌԱԽԱՌՈՆ ՎԻՄԱԳՐԵՐ

Ի տարբերություն գրաբարյան արձանագրությունների՝ բարբառախառն վիմագրերն արտացոլում են տեղական խոսվածքների բնորոշ, յուրատիպ նրբերանգները: Օրինակ՝ Սիսիանի Ենթամարգի Սասուն հնավայրի արձանագրություններից մեկում կարդում ենք. «ԵՒ ՍԻՄՈՆ ԻՒԵԾ ԿԻՐԵՑ» այսինքն՝ ԵՍ ՍԻՄՈՆ ԵՐԵՑՍ ԳՐԵՑԻ (մեր անտիպ հավաքածուից): Տվյալ դեպքում նկատի չունենք փորագրիչների երթեմնակի սխալները:

Բարբառային արտացոլումներ են վիմական բնագրերում հաճախ հանդիպող ՄՈՈՆԵԼ-ՄՈՈԱՍԱԼ,<sup>147</sup> ԳԱՍԵԱՅՍԱՐ-ԳԱՍԵԱՍԱՐ,<sup>148</sup> ԺԴՎՐԱՍ-ԺԴՈՂՎԱ-ՐԱՍ,<sup>149</sup> ԵԽԲԱՐ-ԵՐԲԱՅՐ,<sup>150</sup> ԴԱՊԱՆ-ՏԱՊԱՆ,<sup>151</sup> ՔԱՍՄԱՐ-ԳԱՍՄԱՐ,<sup>152</sup> ՅԱՐԳԱՈՒԹԻՒՆ-ՅԱՐԳԱՅՈՒԹԻՒՆ,<sup>153</sup> ՏԱԶԱՐ-ՏԱՆԱՐ,<sup>154</sup> ՆՈՐԵՔԵԼ-ՆՈՐՈԳԵԼ,<sup>155</sup> ԴԵՐԵՍԻՔ-ԴԱՅՐԵՆԻՔ,<sup>156</sup> ԽՐՈՆԲԵՐ-ՃՈՐԵԴԲԱՅՐ,<sup>157</sup> ԽՈՐՈՍՍԻՄ-ՃՈՂՈՍՍԻՄ<sup>158</sup> և այլն:

Եթե արևելյան Դայաստանի միջնադարյան վիմագրերում հաճախ են հանդիպում ԿԱԿՑԻ, ԿԱԿԵՑԻ կամ ԿԱԿԵՑԻ-ԿԱՍԳԱԵՑՐԻ,<sup>159</sup> ՍԱՂԱԹԻԵԼ-ՍԱՂԱԹԵԼ,<sup>160</sup>

ԱՐԴՅԱՆ-ԱԲՐԱՄՅԱՆ,<sup>161</sup> ԳԵՐՁ-ԳԵՒՂՈԳ,<sup>162</sup> ՍՀԱԳ-ՍԱՅԱԿ,<sup>163</sup> ԶԱՂԱՅ-ԶՐԱՂԱՅ,<sup>164</sup> ՏՈՒՆ-ՏԱԽԻ, ՏՕԼ<sup>165</sup> ՕՒԵՐ-ՌԻՄԵՐ,<sup>166</sup> ԸՆԵՐ, ապա արևմտահայերենում և առանձին գաղթօջախմներում հանդես են զալիս ՆԵՐԵՐ, ՆՈՅՆԵՐԵՐ-ՆՈՅԵՐ. ԲԵՐ,<sup>167</sup> ԻՍԹԵՐԱՆՆՈՍ-ՍՏԵՓԱՆՈՍ<sup>168</sup> և նմանատիպ արտահայտություններ, որոնք վկայում են ոչ միայն փորագրիչների հայերենի իմացության նակարդակը, այլև կրում են արևմտահայ խոսվածքների ցայտուն դրոշը:

Բարբառային արձանագրություններում հաճախ դիտվում է տառերի դրափոխության և բառերի բնայմացման (պալատիզացիայի) երևությը, այսինքն՝ Յ կիսաձայնի գործածությունը երեխն առանց դրա անհրաժեշտության:<sup>169</sup> Օրինակ՝ ՀԱՐԱՅՊԵՏ-ՀԱՅՐԱՊԵՏ,<sup>170</sup> ԿԵՆԱԿԻՑ-ԿԵՆԱԿԻՑ,<sup>171</sup> ԱԹԱՅՊԵԿ-ԱԹԱՎԵԿ,<sup>172</sup> ՆՈՐԱՅՎԱՆ-ՆՈՐԱՎԱՆՔ,<sup>173</sup> ԱՄԵՆԱՅՓՈՐԿԻՉ-ԱՄԵՆԱՓՈՐԿԻՉ,<sup>174</sup> ՄԻԱՅՐԱՆ-ՄԻԱՅՐԱՆ,<sup>175</sup> ԶԱՄԻԱՅՎԱՐ-ԶԱՄԻՐԱՎԱՐ,<sup>176</sup> ԶԵՐԱՅՔԻՐ-ԶԵՐԱԳԻՐ,<sup>177</sup> ՅՈՅԳԵՒՈՐ-ՅՈԳԵՒՈՐ<sup>178</sup> և այլն:

Երեխն տեսնում ենք մեկ այլ երևույթ, երբ Ա և Ո ծայնագորներից հետո ըստ կամոնի գրվու Յ կիսածայնը բացակայում է: Օրինակ՝ ԱԽՈԱՆ-ԱԽՈՅՅԱՆ,<sup>179</sup> ԿԱԵՆԻ-ԿԱՅԵՆԻ,<sup>180</sup> ՅՈՒԴԱԻ-ՅՈՒԴԱՅԻ,<sup>181</sup> ՅԱՈՑ-ՅԱՅՈՑ<sup>182</sup> և այլն:

Տեղական բարբարի ազդեցությամբ դասական գրաբարի ՔՈՅՅՐ (սեռականում ՔԵՈ) բառը գրվում է ՔԵԵՐ,<sup>183</sup> ԱՅՋԻ-Ծ ԻԳԻ,<sup>184</sup> ԽԱՉ-Ծ ԽԱՅՅ,<sup>185</sup> ԿԱՐԴԱՅ-Ծ ԿԱՐԴԵ,<sup>186</sup> ԿԱՐԴԱ-Ծ ԿԱՐՏԻ:<sup>187</sup> Երեխն տեղի է ունենում Է-ի անկում ԾՍՈՒ-ԾՍԱՒՈՒ:<sup>188</sup>

Ուշ միջնադարյան վիմագրերում օտարազգի անճնանուններին գուգահեռ կիրառվել են մի շարք արտահայտություններ, որոնք կենսունակ են առ այսօր. դրանցից են՝ ՀԱԼԱԼ-ԱՐԴԱՐ,<sup>189</sup> ԹԱԽԼԱ-ՍԱՐԱՎ,<sup>190</sup> ՈՒԽՏԱ-ՎԱՐՊԵՏ<sup>191</sup> և այլն: Ինչպես տեսնում ենք, ժողովրդի խոսակցական լեզուն անմիջաբար արտացոլվել է վիմական արձանագրություններում, ուստի առանց նրանց անհնար է որոշակի պատկերացում կազմել հայոց լեզվի բառապաշարի և զարգացման առանձին փուլերի մասին: Վիմագրական ատաղծը պահպանել է ազգային լեզվի բոլոր շերտերը, արտահայտչածները, քերականական կաղապարի բազմապիսի դրսերումների իրական պատկերը:<sup>192</sup>

Բարբառային արտահայտություններով է համենված Գորիսի շրջանի Յի՞ն Խնճօրեսկ գյուղի գերեզմանոցում գտնվող Միսիթար սպարապետի տապանագիրը, ուր կարդում ենք.

«Այս է տապան ի հանգիսեան  
Իջալ մարմով՝<sup>193</sup> ի գերեզման,  
Սայ Միսիթար մեծ ամուվան,  
Սորա օմեր իշխանութեան,  
Սայ բժմուրատ գնաց ջիվան,

Որ է երկրէն սայ Կանճուվէր.

Նահատակեցան թվ. ՈԵՐՉ (1727):»<sup>194</sup>

Բարբառային արձանագրության ցայտուն օրինակներից է ԼՇՅ Տող գյուղում գտնվող Մելիք Եգանի (Ավանի) ապարանքի շքամուտքի 1737 թ. իշշատակագրությունը, ուր կարդում ենք.

«ԹԻՒԻՆ ՈԵՃԶ (1737): ՅԻՇԱՎԱԿ է ԹԱՍԱՊԱՅԱՍ, ԱՅՍ Է, ՈՐ ԵՍ ԴՈՒԿԱՋ ՎԱՐԴԱՅԵՏԻ ՈՐՈՒ, ՈՐ Է ԻՄ ԱԽՈՒՆ Մ[Ե]ԼԻՐ[Ք] ԵԿԱԾ, ՈՐ ԱՌԱՋԵՒ ԽԵԼԻՆ ԶԱՍ ՊԵՐԻԽՆ ԻՆՉ ԿԱՐԺԵՑԻՆ ՔՈԽԱՅ: ՅԻՐ ՆՈՐԱՅ, ՈՐ ՕԼՔԱՆ ՂԱԼ ՂԵՌԱՀ, ՀԱՅ ՍՈՒԼԹԱՆ ՅՈՒՏԵՑԻ ՏՀԱՅ՝ ՉՎՐ ԹԱՍԱՄԻՌ ԹԱՐԵՈՐԻ ՅԻՆՎ[Չ] չՄՓ ՂՈՒԼՈՒՐ ԱՄՎԿ, ԱՅԼ ՕՍՍԱՎԱԼՈՒՆ ԵԿԱՎ ԱՄՎԿԵ, ՈՐ ՊԻՐԱՌ ԻՆԾ ՏՈՒՆՑԵՍ ՄԵԼԻՔՈՒԹՈՒՆ ԴԿԱԿ: ԱՅԼ ՕՍՍԱՎԱԼՈՒՆ ԵԿԱՎ ԱՄՎԿԻ, Ի ՃԵՌ ՆՈՐԱՅՆԻՑ, ՈՐ ՍԱ ԷԼ ԱՍ ՉՄՓ ՂՈՒԼՈՒՐ ԱՐԿԵ, ՈՐ ՊԻՐԵՍ ԴԻՎԱԿ, ԵՄ ԹՈՐԵՑԻ ՈՇ ԿԱՅԱՍՊԱՍԱՍ ԵՄԻՐ ԳԼՆԱԼՈՒ. ԻՆԾ ԴԿԱՎ ՍՈՎԼԵ: ԱՐԱՌ ԵԱՅԴԻՐ ԶՈՐԵՐ ԹԱՐԵՈՐ ԵԿԱՎ ԶՈՐՈՔ ԱՌԱՄ ՕԼՔԱՆ Ի ՃԵՌԵՍ ՕՍՍԱՎԱԼՈՒՆՆԱՅԱՅ: ՆՈՐԱՅ ԷՄ ՉՄՓ ՂՈՒԼՈՒՐ ԱՐԿԵ, ՈՐ ՊՐԱՌ ԻՆՉ ԱՅՍԵՐ Զ (6) ՄՈՐԴԻ ԼՈՒՆՆԱՅԱՅ: ԱՅՆ ՔՐԼԻՄԳՈՒՆԵԱՅ, ՈՐ ՄԵԿՆ ԹԱԼԻԾ, ՄԵԿՆ ՀԱՐԵՄ, ՄԵԿՆ ԽԱԼԻՄ, ԱՅՆ ՔՐԼԻՄԳՈՒՆԵԱՅ, ՈՐ ՄԵԿՆ ԹԱԼԻԾ, ՄԵԿՆ ՀԱՐԵՄ, ՄԵԿՆ ԽԱԼԻՄ, ԱՅՆ ՔՐԼԻՄԳՈՒՆԵԱՅ, ՈՐ ՄԵԿՆ ԹԱԼԻԾ, ՄԵԿՆ ՀԱՐԵՄ, ՄԵԿՆ ԽԱԼԻՄ, ՉԱԿԱՎԱՐ, ԽԱՆ-Ծ պակլարաբեկ=բեկլարբեկի պաշտոն ունեցող խան, ՉԱԿԱՎԱՐ=գրություն, շնորհի թեև նժվարացնում է քնագրի և ըմթերցումը, և ճշգրիտ ընկալումը, սակայն դրանով հանդերձ դժվար չէ նկատել, որ արձանագրության մեջ ժամանակագրական հաջորդականությամբ նկարագրված են մինչև 1737 թ. տեղի ունեցած իրադարձությունները»:<sup>195</sup>

Տեղական բարբառով կամ խոսվածքներով քազմաթիվ իշշատակագրություններ կան հայկական գաղթավայրերում: Ուկրաինայի պատմության պետական քանօրանում պահպանվող (ДМ-60) արծաթյա պահարանի վիրակարդում ենք.

«Աև է յիշատակ պահարան Խաւշարո» (թերևս Խաւշանու)՝ ՄԲ Ասուածածնամոն իւրոք Եազլովայցի<sup>196</sup> Սէրբիսի ոորի մահտէսի Մանոկ կամ իոր կօխակիծ<sup>197</sup> մահտէսի Մանոշակ, իշատակ ՄԲ Խսքաննօսին»:<sup>198</sup>



գտան թուրք-բաթարական, անուն-ազգանունները. Առապ Օղլու,<sup>249</sup> Ղազանի Օղլու,<sup>250</sup> Սարեր Օղլու,<sup>251</sup> Քեապապճի Օղլու,<sup>252</sup> Ճերմակ Օղլու:<sup>253</sup> Ալանակենացը դարձել է Ալանյակի,<sup>254</sup> Եևահիրծեանցը՝ Ջևարժի:<sup>255</sup> Դրիմի վիմագրերում բազմաթիվ են Խան Մելիք,<sup>256</sup> Խանի Պիք,<sup>257</sup> Խըտրշայ,<sup>258</sup> Խութլուպէյ,<sup>259</sup> Պիարա,<sup>260</sup> Սովինչ Պէկ<sup>261</sup> և բազմաթիվ օտարամուտ անուններ:

## ՀԱՅ ՎԻՄԱԳԻՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆԸ

Վիմագիր բանաստեղծությունները նույն չափածո, ոիթմիկ ստեղծագործություններն են, որոնք փորագրված են ոչ միայն փոքրածավալ կոթողների՝ տապանաքարերի, խաչքարերի և հուշայունների վրա, այլև պաշտամունքային կառույցների պատերին: Չարյուրավոր բանաստեղծություններ կան Կ.Պոլսի, Երևանի, Սանկտ-Պետերբուրգի, Մոսկվայի և բազմաթիվ այլ քաղաքների հանգստարաններում: Եթեն գրականության առանձին ենթաժանը, վիմագիր բանաստեղծությունները լինում են խոհա-փիլիսոփայական, ծոներգային-փառաբանական, հիշատակագրային-կենսագրական և այլն:

ԼՂՅ-ի Առաջաձոր գյուղի վիմագրերից մեկում, որը թվագրված է 13-րդ դարով, կարդում ենք բժշկական բովանդականությամբ հետևյալ քառյակը.

«...Տումկս բարի ծառս ամենի,  
Պոտում եփիր հազար բարի,  
Ով վափագի աստ վայելի  
Կենաց յուսոյն նայ հասանի».<sup>262</sup>

Կան նաև այսպես կոչված կտիտորական-շինարարական բնույթի արձանագրություններ, որոնք մեզ են հասել առավելապես 14-րդ դարի սկզբից:<sup>263</sup>

Ահա 1408 թ. վիմագիր բանաստեղծություններից մեկը.

Սայ է տաճար ալսոտուայժային  
Ծինեալ յանում զօրաց վերին  
Գաբրիէլին] եւ Միքայէլին  
Սպասոորք ալսոտուայժ բանին.  
Դալալ արդեամբ[ք Աստուայժատրին  
Կենակին Աղութ իւալինին]  
Եւ ծնողաց Սատարին] Սարեն իւալինին]  
Եւ զօակացն Խաչատրին, Միմենթին,  
Յոհանիսին, Մարի Մելիքին թվ. ՊԾԷ (1408):

Բանաստեղծական կատարելությամբ և փորագրության արվեստով առանձնապես աչքի են ընկնում Ռուսաստանի հայ գաղթօջախների գողտրիկ վիմագ-

րերը:<sup>264</sup> Միմֆերոպուլ քաղաքի հայոց իին գերեզմանոցի վիմագրերից մեկում կարդում ենք Անդրանիկի զիմնորներից մեկի՝ Չարություն Չախոյանի դամբանականը, որ փորագրել է տվել Ս.Կ.Կյուլեզյանը.

«Ով որ կարդայ իմ ատեանը,  
Թող միտք բերէ մեր խեղծ ազգը,  
Չոր վերջ տուաւ գազան թուրքը  
Չայաստանի ժողովուրդը:  
Ամենայն տեղ մահը մի է,  
Մարդ մի անգամ կը մեռնի,  
Բայց երանի անոր հոգույն՝  
Ազատութեան կը զոհուի».<sup>265</sup>

Գնահատանքի և երախտագիտության ջերմ խոսքեր կան Ստեփանոս Նազարյանցին, Սսեր Սսերյանցին, Գրիգոր Խալաթյանցին, հայ զիմնորականներին նվիրված վիմագիր բանաստեղծություններում:

Սոսկովյան հայ հասարակությունը Ստեփանոս Նազարյանցի շիրմաքարին փորագրել է տվել.

«Անձեռագործ դու մահարձան քեզ կանգնեցիր,  
Ոչ հողանիւք որպէս երկաք կամ ործաքար.  
Չըօքո գրչով, սուրբ վաստակով եւ անձանձիր,  
Շունչ կենդանի եւ յետ մահուան հանդիսացար:  
Մահ նոր ազգ եւ նոր լեզուդ իւր ծիրենին  
Քո ջրով բուսած, քեզ է բերում, ով Ստեփանոս,  
Խաղաղ մնա, մի վրովիր, քո է դափնին,  
Խաւարի մէջ լոյս մեզ ծագող Պռոմէթեւու:

Աշխարի ծնար եւ աշխարիս դարձար մշակ,  
Բայց չտեսար այս աշխարից անդորրութիւն,  
Աշխատաւոր մարդկան բաժին է փշեայ պսակ,  
Ահ, քրտնաջան ոսկվոյնների խաղաղութիւն».<sup>266</sup>

Չայրենասիրական ջերմ շնչով է գրված Ռափայել Պատկանյանի՝ Ռոստովի Ս.Խաչ վաճրի բակում վեր խոյացող կոթողի հիշատակագրությունը, որը համեմված է նոր Նախիջևանի հայոց բարբառով.

«Մեղրըցիր քեզի ու քու զաւակիս,  
Պահպան հաւատ, լուգուն խեղծ ազգիտ  
Ու ամէկ էտեւ չի ցաւիլ հոգիս,  
Թէ որ տուն ինձի չի սիրիս, ատիս:

Եփօր շատ տարի կանցնին ու կերթան  
Ու ոսկոններուս իզն ալ չէ մնալու,

Դայվախ, իւեղծ հայեր, ծեր օրդիք կուգան

Պապերուն մեղքը ֆուլիս վրայ լալու...»<sup>267</sup>

Արցախի նշանավոր մետրոպոլիտ Բաղդասարի տապանագիրը կենսագրական բնույթ ունի.

Այս է տապան մետրապոլիտին  
Բաղդասարայ մեծի արիհն  
Կայսերապատկ հովվապետին  
Յազդեն Զալալ մեծ իշխանին  
Տեղայ Արցախսական մեծ աշխարհին  
Թվին ՈՅ (1851) Գ. յուլիսի».<sup>268</sup>

Նմանատիպ բազմաթիվ վիմագրեր կան Արցախի իշխանական դամբանատմերում:<sup>269</sup> Ս. Խաչի փառաբանության գողտրիկ բանաստեղծություն է փորագրված Իջևանի շրջանի (Տավուշի մարզ) Գետաշեն գյուղու Ս. Առաքելոց եկեղեցու խաչքարերից մեկի վրա.

«Ով քառաքի սԼուրիք պանծալի,  
Փրկագործող մարդկան ազգի,  
Տեսիր փառաց անճառելի  
Գերայպայծառ եւ սիրալի»,<sup>270</sup>  
Յորժամ փայլես քնող ամբու երկնի,  
Լեր բարեխաւս ՏԵառ յն ՅԼիսու լի.  
Կարապետին քո կանգնողին,  
Ակնկամն իւր կենակցին  
Եւ զաւակացն գովելի,  
Դամայն ազգացն, որ ի կարգի  
Քահիչ մեղաց լեր ամեմի».<sup>271</sup>

Վիմագրերում կան ազատ բանաստեղծություններ, ծոներ, հիմներ, բնության և տեղանքի ներդաշնակություններ բխող չքնար նկարագրություններ. «Գնացք գետոց ուրախ առնեն զքաղաքս Աստուծոյ եւ սուրբ արար զյարկս իւր Բարձրեալն»—կարդում ենք Տաթևի վանքի Ս. Գրիգոր եկեղեցու արևմտյան ներքին կամարադեղին:<sup>272</sup>

Կերպին տարիներին մի շաբ բանասերներ հատուկ ուսումնասիրության առարկա դարձրեցին հայ վիմագիր բանաստեղծությունը: 1989 թ իրատարակվեց վաղամեռիկ խնբագիր Սերգո Գևորգյանի «Դայ վիմագիր բանաստեղծություն» շահեկան աշխատությունը, ուր հանգամանորեն քննարկված են վիմագիր բանաստեղծությունների ժամանակակից առանձնահատկությունները, տեսակները, բնույթը և այլն: 1999 թ. լույս տեսավ ամերիկահայ բանասեր Նովելի (որդի Շովակիմի Լևոն Սողոմոնյան) «Դազար ու մի վիմագիր բանաստեղծություններ» ժողովածուն, որը հիշատակագրային ստեղծագործությունների մի փունք է:<sup>273</sup>

## ՎԻՄԱԳՐԵՐԻ ԳՐՉՈՒԹՅՈՒՆԸ

### (ԳՐՉԱԳՐԱԿԱՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ)

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հայկական վիմագրերը փորագրվել են բուլորգիր կամ ԵՐԿԱՄԱԳԻՐ, երբեմն՝ ՇՂԱԳԻՐ, սակավ դեպքերում նաև ՆՈՏՐԳԻՐ կոչվող տարատեսակներով: Միջնադարյան բնագրերում ծեռագիր մատյաններում և վիմագրերում, գերակշռել է բոլորգիրը: Ա. Գ. Արքահամյանը<sup>274</sup> հայոց գրերը բաժանում է «Վեց հիմնական տեսակների» մեսրոպյան բոլորգիր երկարագիր, միջին և մարմ մեսրոպյան երկարագիր, ուղղագիր երկարագիր, բոլորգիր, նոտրգիր և շղագիր»:<sup>275</sup> Ապա քննարկում է դրանց անցնանքներն ու առանձնահատկությունները:

11–12–րդ դարերում հանդես է գալիս շղագրությունը, որն արագագրության նպատակ էր հետապնդում:<sup>276</sup> Ուսումնասիրողի կարծիքով բոլորգիրն ավելի փոքր է, քան բոլորգիրը և գրվում է փոքր—ինչ թեքությամբ: Նոտրգիրը կիրառում ունեցավ 16–րդ դարից, իսկ իշխող դարձավ 17–18–րդ դարերում բոլորգիրն գուգահեռ:<sup>277</sup> Նոտրգիր բառն առաջացել է լատիններն ու *notarius*—գրագիր, դպիր<sup>278</sup> եզրույթից և արագագրության համար է գործածվել: Այս գրվում է այն պիսի մարմ տառերով, որ երբեմն դժվար է գտնել ան ու—ից կամ լ—ն շ—ից:

Բազմավաստակ Գ. Շովանելիյանը գտնում է, որ «հայ գրի տեսակները չըրսի կարելի է բաժանել. Երկարագիր, բոլորգիր, նոտրգիր և շղագիր՝ յուրաքանչյուրն իր ստորաբաժնումներով և անցնան շրջաններով»:<sup>279</sup> Կարելի է անվարան ընդունել այս դրույթը:

Անդրադառնալով գրի և գրչության խնդիրներին, պրոֆ. Կ. Ղաֆարյանը կարծում է, որ Սեպուա Մաշտոցը հորինել է միայն բոլորածն երկարագիրը (այժմյան նշանագրության ոճը), այսինքն՝ «բուն Մեսրոպյան երկարագիրը»:

«9–րդ դարում,— շարունակում է նա,— բոլորածն երկարագիրը առաջ է եկել ուղղագիր երկարագիր կամ հին անունով՝ միջին երկարագիրը, որը դարձյալ գլխագիր տեսք ունի, բայց տարասյունները միացնող գծերն ուղղի են և ոչ կամարածն: 12–րդ դարում ուղղագիր երկարագիրը առաջացել է բոլորգիրը, վերջինից էլ ծագում են նոտրգիրն ու շղագիրը»:<sup>280</sup> Շարունակելով մանրամասնել խնդրու առարկան, Կ. Ղաֆարյանը գտնում է, որ Սեպուա Մաշտոցը ստեղծել է գրի երեք ձև:

1. Բոլորածն երկարագիր՝ (վիմագրերի և պաշտամունքային ծեռագրերի համար),

2. Ուղղագիր երկարագիր՝ ծեռագիր մատյանների համար,

3. Նոտրգիր՝ առօրյա գործածության համար:<sup>281</sup>

Ուղղագիծ երկաթագրից առաջացել են շղագիրն ու բոլորգիրը գոեթե միաժամանակ:<sup>282</sup>

Տառերն, ըստ ուսումնասիրողի, հանդես են գալիս հետևյալ դիրքերում.

- 1 Միջնական՝ ա, ո, ո, ս, տ, ւ,
2. Վերնական՝ ե, ծ, մ, ն, հ, ժ,
3. Ստորնական՝ բ, գ, դ, զ, լ, դ, յ, պ, ր, ց, ք: Երբեմն տառերի դիրքերը փոփոխվում են:<sup>283</sup>

Պրոֆ. Ստ.Մելիք-Բախչյանը նույնպես քննարկել է հայ գրի ու գրչության զարգացման փուլերը սկսած ժայռապատկերներից ընդունակ մինչև հայոց գրերի գյուտը, անշուշտ, չանտեսելով արամեերենն ու բիայնական սեպագիրը:

Մատենագրական աղբյուրների հետ միասին, ուսումնասիրողը բարձր է գնահատում հատկապես վիճական արձանագրությունների կարևորությունը հայագիտության համար, խոսուն է կետադրության և առօգանության նշանների, համառոտագրության, հապավմանը գրվող բառերի (ԱԾ, ՅԸ, ՔԸ, ՏԸ, ԵՂՄ-Երուսաղեմ, ԲԵՇ-Խորայել), կապերի և տրոհման նշանների գործածության մասին:

Պետք է նկատել, որ վերջին երկու հապավումները առավելապես հանդես են գալիս մատենագրական սկզբնաղբյուրներում, իսկ միատար գրվող քաղաքանումները (Կ. - Կոստանդնուպոլիս և այլն) վիճագրերում, որքան մեզ հայտնի է, ընդհանրապես չկան:<sup>284</sup> Պետք է տարբերակել կապերի-փակագիրը կցագրից (մանրամասն տես սույն գրքի Կցագիր և Փակագիր Ենթաքաժինները): Ստ. Մելիք-Բախչյանի աշխատության մեջ ներկայացված են թվագրության, ծածկագրության և գաղափարագրության բաժինները:<sup>285</sup> Իրեն հավելված տրված են մատենագրական և վիճագրական օրինակներ,<sup>286</sup> որոնք մեծապես նպաստում են այս առարկայի յուրացմանը:

Մերուպյան այրուբենի զարգացման պատկերը ցույց տալու նպատակով մեջբերենք պրոֆ. Ա.Գ.Արքահամյանի կազմած համեմատական տախտակը, ուր ներկայացված են պատմական հինգ հուշարձանների վիճագրերն ու մատենագրական աղբյուրներից երեք նմուշներ.

ՏԵԿՈՐ	ՊԱՐՊԱԿ	ՀՐԹՈՒՑ	ԲԱԳԱՎԱՆ	ԱՐԻՑ	ՄՐԵՆ	ԼԱԶՐՅԱՆ	ԿՅՈՒՐԵՆ
Ա	Ա	Ա	Ա	Ա	Ա	Ա	Ա
Բ		Բ	Բ	Բ	Բ	Բ	Բ
Գ	Գ	Գ	Գ	Գ	Գ	Գ	Գ
Դ	Դ		Դ	Դ	Դ	Դ	Դ
Ե	Ե	Ե	Ե	Ե	Ե	Ե	Ե
Զ	Զ	Զ	Զ	Զ	Զ	Զ	Զ
Է	Է	Է	Է	Է	Է	Է	Է
Ը	Ը	Ը	Ը	Ը	Ը	Ը	Ը
Ճ				Ճ		Ճ	Ճ
Ի	Ի	Ի	Ի	Ի	Ի	Ի	Ի
Լ			Լ		Լ	Լ	Լ

ՏԵԿՈՐ	ՀԱՐՊԱՍԿ	ՀՐԱՓՄԱՆ	ԲԱԳԱԿԱՆ	ԱՐՈՂ	ՄՐԵՎ	ԼԱԶՐՅԱՆ	ԿՅՈՒՐԵՆ
Հ	Վ	Հ	Հ			Հ	Հ
Է	Թ	Է	Թ		Է	Թ	Է
Ը	Ծ					Ը	Ծ
Ը	Ծ	Ը		Ը	Ծ	Ը	Ծ
Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս
Ա	Ա	Ա	Ա			Ա	Ա
Տ	Ր	Ր		Ր	Ր	Ր	Ր
Ր	Ր	Ր		Ր	Ր	Ր	Ր
Ց	Ց	Ց		Ց	Ց	Ց	Ց
Դ	Դ	Դ		Դ	Դ	Դ	Դ
Փ	Փ	Փ		Փ	Փ	Փ	Փ
Ֆ	Ֆ	Ֆ		Ֆ	Ֆ	Ֆ	Ֆ

Տեխնիկական կատարման առումով արծանագրությունները լինում են փորագիր և մելանագիր:

Փորագիր կոչվում են այն վիմագրերը, որոնք մետաղյա սուր գործիքով փորագրում են քարի հարթեցրած մակերեսին ակոսիկների կամ ռելիեֆ տառերի տեսքով: Այս եղանակով են առաջացել ելենդավոր կամ ուռուցիկ, ծաղկագիր, կենդանագիր կամ թռչնագիր կոչվող արծանագրությունները. սրանց նախնական ձևերը նկատելի են ծեռագիր մատյաններում:

Ծաղկագիր արծանագրությունները քանդակվում են բուսական կամ երկրաշափական զարդարնախշերի խոռության մեջ՝ հիմնականում ելենդավոր կամ ուռուցիկ տառերով: Տառերը սերտորեն միակցված են բուսական (երկրաշափական) նախշերին և դժվար է դրանք միանգամհից զատել հրարից: Անհրաժեշտ է ուշարությամբ, մտովի առանձնացնել տառերը նախշազարդերից: Այս առումով՝ ծաղկագիր արծանագրությունները ըստ էության գաղտնագրության մի տեսակ են՝ դեկորատիվ արվեստի ժանյակավոր հյուսվածքներ, որոնք վերծանողից պահանջում են որոշակի հմտություն և լեզվի ինացություն:

Ծաղկագիր արծանագրությունների փայլում նմուշներից են Տաթևում Յայրապետ Եպիսկոպոսի պատվին 1269 թ. կանգնեցված խաչարի հիշատակագրությունը,<sup>287</sup> Ամաղուի Նորավանքի Բուրբելաշեն եկեղեցու (1339 թ.) «Բուրբել իշխանաց իշխան» մակագրությունը,<sup>288</sup> Ղրիմի Ս.Խաչ Վանքի Ս.Նշան տաճարի թմբուկի 1358 թ. ոիթմիկ արծանագրությունը և այլն:

Թռչնագիր կամ կենդանագիր արծանագրությունները վիմագրերում սակայն են հանդիպում: Դրանք՝ գերազանցապես առկա են ծեռագիր մատյաններով գլխագրերի տեսքով, եկեղեցու հետ առնչվող պաշտամունքային իրերի ու առարկաների վրա:

Թռչնագիր արծանագրության ցայտում նմուշ է Էջմիածնից Յայաստանի պատմության պետական թանգարան բերված վարագույիր արծանագրությունը,<sup>289</sup> որը գիտական շրջանառության մեջ է դրվել Եվգինի Մուշեղյանի վերծանությամբ:

Մելանագիր կոչվում են այն արծանագրությունները, որոնք քարի հարթեցրած մակերեսին գրված են հասուն պատրաստված դիմացկուն մելանով՝ թանգօվ: Դրանք ստվորաբար մակագրվում են կառույցների ներսի պատերին: Այդպիսի առ այսօր պահպանվել են Գեղարդի վիմագիր տաճարում (Պոռշխաղականի հիշատակագրությունը), Գոշավանքում, Էջմիածնի մայր տաճարում, Տաթևում և այլուր: Նկատելի է, որ մի շարք մակագրություններում բնագրի առաջին տառը գրված է այլ գույնի թանգօվ, որն առավել դյուրացնում է ընկալումը և ընթերցումը: Մելանագիր արծանագրություններում նույնպես, ինչպես որմնանկարներում և ծեռագիր մատյաններում, կիրառվի եղել հայկական Որդան կարմիրը: Երբեմն վիմագիրը սկզբից գրվել է ներկով, ապա՝ փորագրվել: Տեսնում ենք նաև հակառակ երևույթը:

## ԱՐՉԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ԸՍ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ

Հիմական արծանագրություններն ըստ բովանդակության լինում են՝

1. Հիշատակագրային
2. Շինարարական
3. Նվիրատվական
4. Իրավա-կանոնական
5. Կրոնա-բարոյախոսական
6. Խաօն

### 1. ՔԻՇԱՏԱԿԱԳՐԱՅԻՆ ԱՐՉԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Զո որոնեք ներքոյ քարանց,  
Ով հետևող դամբարանաց...

(Պ. VIII, 139)

Հիշատակագրային կոչվում են այն վիմագրերը, որոնցում հիշատակվում են հանգույցալի կենսագրական հակիրծ տվյալները՝ անուն-ազգանունը, տոհմական և դասային պատկանելությունը, կենդանության ժամանակ կատարած առավել նշանակալից գործերը, հասարակության մեջ զբաղեցրած դիրքն ու պաշտոնը, կոչումն ու սոցիալական դրությունը (գիտնական, վաճառական, գիլվորական, հոգևորական, արհեստագործ և այլն), մահվան հանգամանքներն ու պատճառը: Օրբելյան նշանակոր իշխան Էլիկումի տապանաքարին քանդակված է առյուծի կերպարանքով հանգույցալը, որի շուրջ փորագրված է, որ Մեծն Տաթևայինի որդի, «Գեղեցկատիպ Էլիկումը» կենդանության ժամանակ առյուծի պես խրոխտ մոնչում էր այլասեռ գնդի դեմ:<sup>291</sup> Էլիկումի կինը՝ Թամբան, ներկայացված է իրեն «Քրիստոսասէր իշխանուիի»:<sup>292</sup>

Կենսագրական բնույթ ունի Ներեկ գյուղի (Վայոց ծորի նարզ) ժայռաբեկորի վրա փորագրված 14 տողանոց արծանագրությունը:<sup>293</sup> Գեղարքունիքի վիմագրերից մեկում կարդում ենք, թե ինչպես ոմն գորիսեցի, «պարոն Լալ» անունով, ցանկանում է Գեղարքունիքում տուն կառուցել, սակայն «(Ի) շինել տան անգաւ գերան ի գլխուն եւ մեռաւ»:<sup>294</sup>

Բազմաթիվ հիշատակություններ կամ պատերազմներում զոհվածների կամ գերեվարվածների մասին:<sup>295</sup> Վիմագրված է, թե ինչպես համայնքի անդամները հանգանակություն են կազմակերպում թուրքերի մոտ գերեվարված համազուղացիներին փրկագնելու նպատակով:<sup>296</sup> Բազմաթիվ են «անօրենների կողմից» սպանված մարդկանց մասին եղած հիշատակությունները:<sup>297</sup>

Հանգուցյալների մասին հիշատակագրություններ կոթողներին փորագրի են դեռևս հնադարում: Այդ ավանդույթը շարունակվում է նաև այսօր: Կաղազով հիշատակագրություններից կարելի է նշել Դվինի երկրետ տապանաքարերը, որոնք սկսվում են «Այս դիր...» բանաձևունով՝ «Այս դիրս Գէորգա քահանայի»:<sup>298</sup> Կամ՝ «Այս է հանգիստ Դաւթի՝ Գընքունեաց տ Լետոյ ն, որդոյ Կասկա»:<sup>299</sup> Վկայակոչված արձանագրությունները թվագրություն չունեն, և Կ.Դաֆադրյանը այս երևույթը բացատրում է «նրանց հնությամբ»:<sup>300</sup> Սկսած էլ է, որ վկայված անձնանունների սեռական հոլովի Յ կիսաձայնը չի գրված Գէորգա Կասակա: Անկախ լեզվական իրողություններից, Կ.Դաֆադրյանը Դվինի երկրեր տապանաքարերը թվագրում են 6–րդ դարով,<sup>301</sup> թեև հայտնի է, որ նմանաւույթը կոթողները մեզանում հայտնի են 5–րդ դարից ընդհուպ մինչև 11–րդ դար ներառյալ:

10–12–րդ դարերի կոթողային հուշարձաններին, մասնավորապես տապանաքարերին փորագրված են հանգուցյալների միայն անունները, հաճախ առանց թվագրության: Օրինակ՝ Դաշտատի վանքի մեջ գավթում բարձրված իշխանագունների տապանաքարերին կարդում ենք. Մարիամ, Ուսուուտան, Արա, Դաւիթ, Կասակ, Սեւադա և այլն:<sup>302</sup> Առավել հայտնի կյուրիկյանները մերկայացված են «թագաւոր» տիտղոսով:<sup>303</sup> Նույն պատկերը տեսնում ենք Սանահի վանքում,<sup>304</sup> Կաղարծնում<sup>305</sup> և այլուր:

Կահանավանքի մեջ տաճարի այլունասրահի պեղումներից հայտնաբերված տապանաքարերի վրա փորագրված են հանգուցյալների միայն անունները՝ Աշոտիկ, Դինար, Կատա, Զևանշեր, իսկ գերագույն իշխանավորները՝ Կյուրիկյանների նման, հանդես են գալիս «թագաւոր» տիտղոսով կամ արքայահոր անվան հիշատակությամբ: Ի տարբերություն Դյուլսիսային Դայաստանի տիրակալների՝ Սյունիքի արքաների տապանագրերը անխստիր թվագրված են՝ «Ամբատ թագաւոր. Թվ. :Շ: (1051)<sup>306</sup>» կամ «Գրիգոր թագաւոր՝ որդի Աշոտիկ. Թվ. :ՇԻԱ: (1072):<sup>307</sup> Առավել ընդարձակ է Արցախական իշխանազուն Սահակ-Սևադա Բ-ի տիկնոց՝ Սոփիի տապանագրերը. «Սոփի թագուիի, զորանշ՝ Գրիգոր թագաւորի, մայր Շահանդխտո. Թվ. :ՇԼ: (1081):»:<sup>308</sup> Երբեմն նկատի ունենալով հանգուցյալի մեջ հետինակությունը տարածաշրջանում և հարևան պետությունների արքունիքներում, նրան նույնպես կոչում են «արքա»: Դայունի է, որ Օքբեսան գահերեց իշխան Սմբատը չի թագարվել (գոնե մեզ հայտնի չեն նրա թագադրվելու փաստը), սակայն նրա տապանաքարին փորագրված՝ «Սմպատ արքային է տապանս... Թվ. :ՉԻԲ: (1273):»:<sup>310</sup>

Դիշատակագրային վիճագրերում ի մեջի մասսամբ նշվում են հանգուցյալի պատվանուններն ու կենանության ժամանակ ունեցած տիտղոսները՝ գահերեց կահակալ իշխան, իշխանաց իշխան, սպասալար, սպարապետ, ինչպես նշեցինք, նաև առկա է դասային պատկանելությունը՝ հոգևորական, զինվո-

րական, վաճառական, բժիշկ, մտավորական և այլն:

Դայկական գաղթօջախների կոթողային հուշարձաններում հանգուցյալները նույնպես ներկայացված են իրենց գրադեցրած պաշտոններով և ունեցած տիտղոսներով՝ Վեհազն-բոյարին,<sup>311</sup> «տոհմական պատվավոր քաղաքացի»,<sup>312</sup> «պալատական խորհրդական»,<sup>313</sup> «տիտղոսակիր խորհրդական»,<sup>314</sup> որոնք վկայված են հայերեն և ուսերեն լեզուներով միևնույն կոթողի վրա:

Դաճախ հիշատակագրային բնագրերը տրվում են բանաստեղծական կաղապարով.

### Աստուածատուր Դայրապետեամ

Զուղայեցի եւ Բաշխումեան,

Գործով զինուոր եւ կապիտամ...<sup>315</sup>



Ծնարս-կապիտան Զահալ Փիրայանի (Փիրալով) տապանաքարին երեք լեզուներով՝ հայերեն, ուսերեն, և վրացերեն, նշված է, որ նա «հանուն հայրենեաց» մասնակցել է 1812 թ. Բորոդինոյի ճակատամարտին, վիրավորվել է ուազմի դաշտում և վախճանվել է այնտեղ ստացած վերթքից:<sup>316</sup> Դրիմահայոց հայտնի բարերար, վաճառական Դովակին Սեֆերյանի հուշակոթողին արձանագրված է, որ «սորա հաշուով գնած եւ շինած է Սիմֆերոպոլի հայոց աղջկանց ուսումնարանի շենքը իւր բակով եւ բոլոր բնակարաններով 1892 թ.»:<sup>317</sup> Նույն բարերարը կառուցել է նաև Եվպատորիայի հայոց ուսումնարանը նախորդից մեկ տարի առաջ՝ 1891 թ.:

Արևելյան Եվրոպայի, մասնավորապես Ուկրաինայի (Լվովի) 16–18–րդ դարերի հայկական կոթողների վրա՝ հիշատակագրությունից հետո, քանդակած են հանգուցյալների տոհմանշանները:<sup>318</sup> Դրանց մի զգալի մասը փորագրված է ծովս զարդաքանդակների մեջ, բանաստեղծական հանգավորում ունեցող բնագրերով:

Բուլղարիայի հայկական հիշատակագրային վիճագրերն ուսումնասիրել են հրատարակել է Արա Մարկոսը: Բազմաթիվ հիշատակագրեր՝ հայերեն և թուրքերեն լեզուներով, բուլղարերեն թարգմանությամբ Արա Մարկոս տպագրել է «Մայք և Պլամետիւս և Կուլտուրա» հանդեսի էջերում<sup>319</sup> և այլուր:<sup>320</sup>

Խաչքարեր և կոթողներ կանգնեցվում են ոչ միայն հանգուցյալների աճյունների վրա, այլև պատմական լայն հնչեղություն ունեցող իրադարձությունների կապակցությամբ: Դրա վառ պացույցներից է ամիրսպասալար Զաքար Քաջարյանի կանգնեցրած խաչքարը՝ Անբերդը սեղուկ-թուրքերից ազատագրելու առիթվ:

## ՏՈՂՄԱՆՉԱՆՆԵՐ



## 2. ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՐՋԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Շինարարական բովանդակություն ունեցող արձանագրությունները արտացոլում են այս կամ այն կառույցի (Եկեղեցի, գավիթ, մատուռ, դպրոց, կամուրջ, ջրատար և այլն) շինարարական վավերագրերը: Երբէ կանոն, նշվում են նպաստավորողները՝ կտիտորները, նրանց հարազատները, աջակիցները, շինության անունը, սկիզբն ու ավարտը, երբեմն նաև վկաները: Ընդունված է կիրառել «Եղել աւարտ շինութեան», «կառուցաւ», «կատարեցաւ», «շինեցաւ» կանապարային բանաձևումները:

Շինարարական վիճագրերում երբեմն անուն առ անուն հիշատակվում են կառույցին աջակցող անձինք: Օրինակ՝ Սյունիքի հոգևոր առաջնորդ Յովակիս Եպիսկոպոսի նախաձեռնությամբ Տաթկի վանքում 1787 թ. կառուցվում է Գրիգոր Տաթևացու դամբարան-մատուռը, որի վրա արձանագրվում են Բոնակոր գյուղի (Սյունիքի մարզի Միսիանի Ենթամարզ) 24 բնակիչների, ընդ որում չորս կանանց անձնանունները:<sup>321</sup> Նույն բնագիրն, առավել ծավալուն տեսքով, փորագրվում է հիշյալ գյուղի Ս. Գրիգոր Եկեղեցու պատին:<sup>322</sup> Շինարարական աշխատանքներից առաջ, ըստ հնարավորին, ոմանք վճարում են կանխիկ դրամ, մյուսները կառույցն ապահովում են անհրաժեշտ շինանյութերով և պարագաներով:<sup>323</sup> Ամի՞ի պարիսպների կառույցնանը (բացի Սմբատ Բ թագավորից) եռանդուն մասնակցություն են ունեցել Զունդիկը, Լուսոտը, Սարգիսը, Միսիթարիչը, Սամուելը, Սիմեոնը, Շանուշը, Մամիսաքունը և ուրիշներ:<sup>324</sup> Ենտագա դարերում պարզապես նշում էին, որ այս կամ այն շինությունը՝ իհմնականում Եկեղեցին, կառուցվել է գյուղի ողջ հասարակության ջանքերով, առաջ անունները թվարկելու:

Երբեմն հմագույն կառույցները նորոգելու ժամանակ նույնպես կիրառվում էին «շինեցաւ» կամ «կառուցաւ» բառերը: Նման դեպքերում պետք է հասկանալ նորոգվեց, վերակառուցվեց, վերականգնվեց իհմաստով:

Օրինակ՝ Սյունիքի թագավորներ Սմբատ Բ-ն ու Գրիգոր Ա-ն իրենց արձանագրությամբ հայտարարում են, որ 1046 թ. իրենք են կառուցել Վահանավանքը.

«ԹՎ. :ՆՊԵ: (1046)

ՈՂՈՐՄԵԿ ՔՄ ԱՌ ԱՄՊԱՏԱ ԹԱՎԱՒՐԻ ԵՒ ԻՒՐ ԵՂԲԱՒՐ

ԳՐԻԳՈՐՈ՛ ՇԻՆՈՂԻ ՄՐԲՈՅ ԵԿԵՂԵՑԻՅՅ, ՄՐԱՎԻՍ ԵՒ ԺԱՄԱՏԱՎԱՆ...»

Իրականում Վահանավանքը 911 թվականին իհմնադրել և կառուցել է Չափկ իշխանի որդի Վահանը<sup>325</sup>, որն էլ թաղված է իր կառուցած Եկեղեցու մուտքի դիմաց. տապանքարին փորագրված է «ՎԱՐԱՆ ՆԱԽԱՇԻՆՈՂ ՏԵՂԵԼ ԱՅՍ»:

Վերանորոգչական աշխատանքների հիշատակություն է պահպանվել գեղարքունիքի մարզի մի շարք հուշարձաններում: Դացարատ գյուղի Ս. Աստվա-

ծածին Եկեղեցու պատին կարդում ենք. «ԵՍ ՇԱՂՈՒԹԱՅ ԻՇԽԱՆ ԱՌԱԵՂԱՑԻ ԿԱՌՈՒԹԵՐՄ ԱՅՆ ՄԲ ԱՌԱՎՈՒՆ ԵԿԵՂԵՑԻ Ի ՐԱՄԱՆ Ի ԲԱՌ. ՓՐԿՎԱԿԱՆ :ՊՂԲ: (898) ԵՒ Ի ԲԱՌ. ՀԱՅՈՑ ՅԵԽՈՒՄ: (348). ԻՍԿԱԿԱՆԻՑ ԱՐՏԱԳՐԵՑԱՐ 1893 թ.»:<sup>326</sup>

Բազմաթիվ վկայություններ են պահպանվել ծիրանքն-սրանցներ, ջրաղացներ, այլևայլ տնտեսական շենքեր կառուցելու, առուներ և ջրատարներ անցկացնելու նախին:<sup>327</sup> Մատենագրական սկզբնադրյուրներում և Վիմագրերում հիշատակվում է Ակների (Վարարակին) 29 կմ Երկարություն ունեցող ջրատարի անցկացման և նորոգման վերաբերյալ:<sup>328</sup> Ակների ջուրը Տաթև է տարվել 932 թ. Յակոբ Ա Սյունյաց Եպիսկոպոսի և Փիլիպե իշխանի առք ու վաճառքի շնորհիվ: Մինչև օրս Գրիգոր Կերի շեն թաղամասից վեր պահպանվել է Յովիաննես Եպիսկոպոսի նորոգչական արձանագրությունը.

«ՅԱՄԻ ՅՈՐՈՒՄ ԵՐ ԹՎ. :ԿԽԳ: (1294), ԵՍ ՏՄ ՅՈՐԱՆԵՍ ԿԱՍԱԽ ԱՌ ԵՒ ԱՐԱԹԻՒՐ ՉՈԳԵՇՈՐ ՅԱՄԻ ԻՄ ՏՄ ՅԱՅՐԱՊԵՏԱՍ ՏԱՐԱ ԶՁՈՒՐԻ ՎԱՐԱՐԱԿԱՆ Ի ՎԱՐԴԻՇՆ, ԶՈՐ ԱՌԱՎՈՍԻՒ ԵՒ ՅՈԳԵՇՈՐ ՏՄ ՅԱԿՈԲ ԳՆԵԱԼ ԵՒ ՏԱՐԵԱԼ ԲԱՁՈՒՄ ԱՇԽԱՏՈՒԹԵԱՄԲ ԵՒ ԱՐԴԵԱՄԲԲ. ԶԻՆԱՓԱՍԵԱԼՆ Ի ԲԱՁՈՒՄ ԱՍԱՍԱԿԱՏ ԿՐԿԻՆ ՍՈՐՈԳԵՑԱԲ ՅԻՇԱՏԱԿ ՄԵԶ ԵՒ ՆԱԽՆԵԱՑ ՄԵՐՈՑ. ՈՐՔ ՅԱՆԴԻՊԻՔ ՄԲ ԵՐՐՈՐԴ ՊՈՒԹԵԱՄԲ ՅԻՇԵՑՑ Ի ԲԱՌ»:<sup>329</sup>

Շինարարական արձանագրությունները երբեմն փորագրվում են բանաստեղծական հանգավորնամբ: Օրինակ՝ Որիմի Ս. Խաչ վանքի Ս. Նշան Եկեղեցու գմբերի շուրջ եղած արձանագրության համաձայն այս տաճարը կառուցվել է

«ԵՐԵԲ Ի ԻՐԻԿ ԵՒ Ի ԻՐԱՎՈՒ

ՅՈՒՐ ԵՒ ՅԻԽՈՒ ԱԿՍԵԱ ԱՄԻՆ...»

Այսինքն՝ 1358 թվականին:<sup>330</sup> Լվովի հայկական Եկեղեցու (1363 թ.) զանգակատան պատին փորագրված է չափածո հիշատակագիր, ըստ որի՝

«ՈՒ ԿԱՅՈԳ ԹՎԻՆ (1571 թ.)

ԵՒ ՅԱՄԵԱՆՆ ՅՈՒ ՆՎԱԼԻԻՆ

ԽՈԲԱ ԱՆԴՐԵԱՍ ԿԱՓԱՅԵՑԻՆ

Շինել Եռուր Գտում զանկակին...»<sup>331</sup>

Ապա՝ թվարկվում են կառուցողի արյան մերձավորները:

Մի շարք շինարարական արձանագրություններում նշված են կառուցող ճարտարապետների և քարգործ վարպետների անունները:<sup>332</sup> Որոնք երբեմն փակագրվում են գաղտնի մնալու ակնկալիքով:

Կան օրինակներ, երբ շինարարական արձանագրությունները փորագրվում են ակրոստիքոսի եղանակով. ծախակողմյան ծայրատառերով կարելի է բացահայտել կառուցողի կամ նպաստավորողի անունները:<sup>333</sup>

Բազմաթիվ շինարարական արձանագրություններ են պահպանվել բուն Յայստանի և հայ գաղթօջախների տարածքներում:<sup>334</sup> Դրանք փորագրված են առավելապես բարավորներին և կառույցների տեսանելի մասերին:

### 3. ՆՎԻՐԱՏՎԱԿԱՆ ԱՐՉԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

